№ 63 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 27 1904 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 27 № 63

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ ՈՒԹ րուբլի։

Դիմել Тифлисъ, редакція «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև ապրիլի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղօրօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի։

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղափարը անմահ է. Քաղաքական տեսութիւն. Պատերազմի բեմը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դեռ թափառում է. Կեանքից և գրականութիւնից. Նամակ Ախալցխայից. Նամակ Ղրիմից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թաղված Քրիստոսը։

ԳԱՂԱՓԱՐԸ ԱՆՄԱՀ Է

Քրիստոսի յարութիւնը Գաղափարի անմահութեան տօնն է։ Այսօր մենք նորից վերյիշում ենք անձնուիրութեան այն մեծ օրինակը, որ դարեր շարունակ հիացում է պատճառել մարդկային սերունդներին։

Փոխվում են այդ սերունդները, սակայն հիմնական պահանջը մի և նոյնն է մնում—մտցնել փրկարար հոսանք կեանքի մէջ, բարձր պահել ձգտումը դէպի ազնիւը և կատարեալը, պաշտել սկզբունքները և ձգտել նրանց իրագործութեանը հոգու բոլոր կարողութիւններով։

Որոշ աշխարհահայեացք և հաստատ համոզմունքներ—ահա ինչն է պակասում մեր ժամանակակից երիտասարդութեան։ Բարեմիտ, հարցասէր, հանրային խնդիրներով հետաքրքրվող մարդիկ շատ կան մեր մէջ, բայց սակաւ են անձնաւորութիւններ, որոնք առաջնորդվում լինեն հաստատ սկզբունքներով և յայտնի դաւանանքով իրանց գործառնութիւնների մէջ։

Մշտապէս տատանվել, երէկվայ համոզմունքը այսօր ուրանալ, սկզբունքները փոխել և նրանց խառնաշփոթել—դա մի երևոյթ է, որ իր բոլոր այլանդակութեամբ կանգնած է այսօր մեր առաջ և ջլատում է հասարակական կեանքի առաջադիմութեան համար կատարվող ջանքերը։

Երբ որ բացակայ են հաստատ համոզմունքներ և երբ չը կայ գործելու պատրաստակամութիւն, այն ժամանակ մարդիկ բաւականանում են միայն խօսքերով, միայն բարի ցանկութիւններով, միայն հեքիաթներով և անընդունակ են ներկայանում թէ կազմակերպելու լուրջ գործունէութիւն, թէ գնահատելու կեանքի իրերը և երևոյթները և թէ աջակցութիւն ցոյց տալու առաջադէմ գործողներին։

Նայեցէք մեր հասարակական գործերին, զանազան հաստատութիւնների և ընկերութիւնների մէջ գործողներին։ Որքան թոյլ և անբովանդակ է նրանց գործունէութիւնը։ Ինչո՞ւ։ Որովհետև բացակայ է գիտակցական վերաբերմունքը դէպի գործը, բացակայ է գործին հետևելու ներքին եռանդը, բացակայ է այն տոկուն և եռանդուն ոյժը, որ առաջ է գալիս որոշ դաւանանքի և անխորտակելի հաստատ սկզբունքների հրամայողական թելադրութիւնների ազդեցութեան տակ։

Որոշ դաւանանքի և համոզմունքի, լայն գաղափարական հայեացքների պահանջը—հասարակական կեանքի առողջացման և զարգացման պահանջն է։ Այդպէս էր տասնինն դար առաջ։ Այդպէս է այժմ։ Այդպէս կը լինի և յաւիտեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհը հանդիսատես է երկու տեսակ երևոյթների։ Մի կողմից պատերազմ է մղվում լուծելու այն կնճռոտ և վիճելի խնդիրները, որոնք կուտակվել են Հեռաւոր Արևելքում և Աֆրիկայում, միւս կողմից Եւրօպայում փորձեր են արվում միջազգային համաձայնութեամբ կարգաւորելու պետութիւնների յարաբերութիւնները զանազան հարցերի վերաբերութեամբ։

Բացի ռուս-եապօնական բեմից ներկայումս զօրքեր փոքր չափով և պատրաստութեամբ շարժվում են Տիբետում և Աֆրիկայի գերմանական հողերում։ Մենք հաղորդեցինք մի քանի նախնական տեղեկութիւններ անգլիական արշաւանքի մասին Տիբետում և ցոյց տուինք նրա նշանակութիւնը։ Ինչ վերաբերում է գերմանական արշաւանքին, որ կատարվում է Աֆրիկայում, նա նպատակ ունի որոշակի կերպով անցկացնել գերմանական տիրապետութեան սահմանները և ընդարձակել գերմանական ազդեցութեան շրջանագիծը։ Գերմանական արշաւանքը սահմանափակ նշանակութիւն ունի ներկայումս և չէ պահանջում Գերմանիայից ոչ ահագին ծախքեր և ոչ մեծաքանակ զօրքեր։

Տիբետի անգլիական արշաւանքը, ինչպէս և պէտք էր սպասել, սկսել է առանձին հետաքրքրութիւն շարժել եւրօպական քաղաքական շրջաններում։ Անգլիայի հաստատ որոշումը՝ ներս մտնել Տիբետի կարևոր քաղաքական և առևտրական կէտերը—նկատվում է, իբրև մի վճռական քայլ հրատարակելու Տիբետը անգլիական ազդեցութեան շրջանի մէջ։

Դեռ քսան տարի սրանից առաջ, այն է 1885 թւին, Անգլիան փորձ արեց Տիբետում բացառիկ ազդեցութիւն ձեռք բերել և աջողեցրեց ստանալ Պեկինի կառավարութիւնից համաձայնութիւն պահելու Տիբետում անգլիական դեսպանական մարմին որոշ արտօնութիւններով։ Սակայն տիբետցիները չափազանց ծուռ նայեցին անգլիացիների վրա և յայտնեցին, որ նրանք ոչ մի պայմանով չեն համաձայնվի անգլիացիներին թողնելու իրանց երկրի մէջ։ Տիբետցիները չէին կարող ներել Անգլիային այն բանը, որ նա առանց քաշվելու միացրեց իր հնդկական տիրապետութիւններին Նեպալ, Սիկկիմ և Բուտան կիսաանկախ երկիրները, որոնք համարվում էին մի ժամանակ Տիբետի հովանաւորութեան տակ։ Տիբետը անհաշտ թշնամի դարձաւ Անգլիային։ Անգլիան չը ցանկանալով սուր ընդհարումներ ունենալ Տիբետի հետ, ժամանակաւորապէս յետ նահանջեց։ Տիբետցիները մի քանի ընդհարումներ ունենալուց յետոյ փորձեցին 1900, 1901,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՂՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԸ

... Զըրը՜նգ, զըրը՜նգ... զըրը՜նգ, զըրը՜նգ...

—Մըկօ, այ Մըկօ։

Մըկօն ձգձգվում է անկողնի մէջ, մռմռում.

—Հը. Նազլու, հը՞։

—Չէս լսում զանգի ձէնը, տնաշէնի մարդ, խեղճ տէրտէրը թէլերը կտրեց, դուռն էլ մի կողմից են ծեծում, Թուխիկենք են, ժամ են գնում, մեզ էլ խաբար են անում, իսկ դու խամփալով քնած ես, էլ կը հասնենք, ամունքը հիմա կէս էլաւ, էս օր էլ քնելու օր է...

Մկօն ցատկում է տեղից ու նստում յօրանջելով.

—Վայ օղորմի հօրդ, կնիկ, լաւ որ զարթեցրիր... տօ էս ինչ բան էր, ճոչ քուն թափաւ վրաս... էս օրվայ զանգը Գաբրիէլի փողն է ախր... քնէ՞լ կըլնի... արար-աշխարհ ժամ պէտք է գնայ... էս ինչպէս էլաւ քնով անցայ։

—«Ինչպէս էլա՞ւ»... իրիկունը թաթախումը մի թէնգի գինով արիր, դէ գինին ու քունը ախպէրներ են։

—Արդար է, արդար է ասածդ, կնիկ, ինչ լաւ, որ շուտ ես զարթնել, թէ չէ առանց փայ ու բաժին կը մնայինք Յարութիւնից։

—Շուտ արա շուտ, զանգերը վաղուց են տալիս։

Մկօն շտապ-շտապ հագնվում է ու երեսը խաչակնքում։

Եւ գիւղական զանգը շարունակում է ղօղանջել մեղմիւ, միակերպ. և նրա հնչիւնները տարածվում են գիւղի վրա՝ ինչպէս տառապող մարդու գոհութեան մրմունջներ, և ապա երկինք են բարձրանում ցաւատանջ աշխարհից։ Յոգնած հոգիների մէջ ծագող հեռաւոր յոյսերի համար մարդիկ այսօր հաշտվում են երկնքի հետ և պղնձի թրթիռները ասես նրանց սրտերում լսվող հնչիւններից է կազմված։

Քրիստոսի Յարութիւնն է...

Զըրը՜նգ, զըրը՜նգ... զըրընգ, զըրը՜նգ...

Մկօն ականջ է դնում երեսն անընդհատ խաչակնքելով։ Եւ ինչ լաւ է հնչում այդ ձայնը. նա էլ այնպէս լալկան չէ, էլ ամենօրվայ պէս չէ հեկեկում, չէ ողբում կողկողագին, այլ կարծես իր թրթիռներով խօսում է ինչ որ խորհրդաւոր, սրբազան բանից, ապրելու, տքնելու, հաւատ է ներշնչում նոյն իսկ տառապանքի մէջ։ Այդ անխաբ Յարութիւնը, որ հնչվում է եկեղեցու կատարից, վանում է խեղդող մռայլը, սրտերի վրա կուտակված դառն յուսախաբութիւնները։ Մկօի հոգին թեթևանում, կուրծքը լայնանում է և սիրտը լցվում է մի անհուն բարութեամբ դէպի ամենքը, ամեն ինչ։

Տարին մի անգամ, միայն մի անգամ է այդ օրհնված զանգն այդպէս, մտածում է Մկօն, թէ չէ շարունակ լալիս է ու հեծկլտում. նա լալիս է թաղմանը, լալիս է պատարագներին, տօներին, օրը երկու անգամ, լալիս է նոյն իսկ հարսանիքներին պսակվողների գլուխների վրա։ Տարին մի անգամ է նա ուրախ, կենսաթրթիռ. ինչ փոյթ. այսօրվայ նրա ասածը բաւական է էլի մի տարի ապրելու, չարչարվելու, աշխատելու համար մինչև որ մի օր էլ նա կը հեծկլտայ մեր դագաղի վրա, երբ կը մարեն բոլոր ցաւերը գերեզմանի լռութեան մէջ։

—Օրհնվա՜ծ զանգ... կնի՛կ, ինչ լաւ է էսօր զանգի ձէնը, քաղցր, ուրախ, էլ չի լալի, էնպէս չէ՞ կնիկ... էլի արժանացանք Յարութեանը, փառք քեզ բարխուսի Քրիստոս Աստուած, հազար փառք Քեզ, Քո ողորմութիւնը անչափ է, մենք հող ու մոխիր ենք։

Զանգի ձայնով յափշտակված Մկօն նոյն իսկ մոռանում է, որ պէտք է շուտ հագնել։

—Ա՛յ մարդ, շո՛ւտ արա, աղօթքդ ժամում կանես, ուշացանք ախր։

—Արդար է, արդար է ասածդ, կնիկ, օղորմի հօրդ, ինչ լաւ որ շուտ ես զարթնել, կրկնում է Մկօն և շտապում է շուտ հասնել այնտեղ, ուր Քրիստոսն է յարութիւն առել այդ խորհրդաւոր գիշերին։

Խրճիթը խաւար է. մարդ ու կին հագնվում են մթութեան մէջ. ճրագն ինչո՞ւ վառել, խաւարն էլ այսօր ահաւոր չէ, նա չէ խեղդում, չէ ճնշում. դրսի ձայները, ամբողջ գիւղի կենդանութիւնը այդ գիշերը վարակել էին ամբողջապէս. ամեն ինչ թեթև էր, տանելի, գըրաւիչ։

—Սարգիս, այ Սարգիս, վեր դու էլ որդի, կանչում է Մկօն իր տասն հինգ տարեկան որդուն. նա էլ ժամ պիտի գնայ Թուխիկենց Մանուկի հետ՝ խաչ-աւետարանի վրա այս առաւօտ եղբայր է դառնալու։ Բայց Սարգիսը չը կայ, նա վաղուց է վերկացել, հագնվել և դուրս է եկել բակը աստղերին նայելու՝ սպասելով ծնողներին։

—Սարգիսն էլ քեզնից առաջ է զարթնել, անուշութեամբ հեգնում է Նազլուն։

—Ապրիս տղաս, արդար է, արդար է։

—Ես էլ կը գամ ժամ, լսվում է մի խաւար անկիւնից։ Փոքրիկ Մարանն է զարթնել։ Ծընողները նրան տանելու ցանկութիւն չունեն, շատ է պստիկ, հազիւ վեց տարեկան, բայց զարթնել ու քնաթաթախ ձայնով պահանջում է։

—Քնի՛ր, քնիր, Մարան ջան, աշխատում է հանգստացնել մայրը, մենք տեղ չենք գնում։

—Չեմ, ժամ էք գնում, ես մենակ չեմ մնայ, ժամում էլ կարմիր ձու կը լինի։

—Թող գայ, կնիկ, միջամտում է Մկօն, տարին մի անգամ է պատահում, թող երեխան ժամ տեսնի, Աստծու խօշն էլ կը գայ. վերկաց Մարան ջան, հագնվիր շուտով։

Փողոցումն են. Մկօն ու Նազլուն գնում են մէջտեղից, Մարանն ու Սարգիսը ծնողների երկու կողմից։ Դեռ խաւար է, բայց մի երկչոտ խաւար, որ կարծես ճնշվում է, շտապում է կծկվել պատերի տակ, անկիւններում լուսաւոր Յարութեանը ճանապարհ տալու համար։ Խրճիթների դէպի արևելք ուղղված պատերը հազիւ գունատվել են, նայում են հեռու խաւարի միջից, ասես ժպտում են մի ծածուկ բանի, և եթէ կարողանան՝ մի բան կասեն, մի ազդու, ցնցող բան։ Ապրիլի սկիզբն է, գարունն է արդէն, բայց վաղ առաւօտեան օդը ցուրտ է, կիսաքուն մարմինները թեթև սրթսրթում են ու իրար սղմվում. այդ ցրտութեան մէջ իսկ՝ գարնան կենսաբեր շունչը կայ, նրա տակ թաքնված է ապրիլեան դուրեկան ջերմութեամբ հևացող ցերեկը։

Փողոցներով անցնում են հազիւ նկատելի մարդկային ստուերներ շարան-շարան, խումբ խումբ, խօսում են ցածր, ծիծաղում են բարձրաձայն։ Խաւարի մէջ ամենից աւելի որոշը չարսաւաւոր կանայք են. ընդհանուր սևութեան մէջ նրանք ծրագրվում են ուրուականների պէս, մեռելներ լինեն կասես, որոնք իրանց պատաններով դուրս են սողացել գերեզմաններից Քրիստոսի հետ. չէ՞ որ Յարութիւն է։ Եւ գալիս են, գալիս են գիւղի զանազան կողմերից, կարծես այդ գիշեր փողոցները գալարվել են, բերանները դարձրել դէպի եկեղեցի՝ այնտեղ անթիւ բազմութիւն թափելու համար։ Մկօին թւում է, թէ միայն իրանց գիւղը չէ, որ ոտքի է կանգնել և շարժվում առաջ, այլ ամբողջ աշխարհն է խաղում դէպի իրանց փոքրիկ եկեղեցին, ուր Քրիստոսն է յարութիւն առել։

Եւ նա՝ այն սուրբ շէնքը իր մութ զանգվածով ծրագրվում է միւս տների մէջ գիւղի կենտրոնում, և նրա կատարից է, որ զանգերը շարունակում են բերանաբաց ու եռանդով զըրընգալ մի հնչուն, ահագին ծիծաղի անվերջ ելևէջերով։

Մկօն նայում է եկեղեցուն, աշխատում է խաւարի մէջ որոշել բըբջացող զանգերը, բայց չէ կարողանում և նրան թւում է, թէ այս գիշեր նրանք բարձր, շատ բարձր պիտի լինեն, երկնքի տակ, Աստծուն բոլորովին մօտիկ։ Ապա նա աչքը յառում է եկեղեցու լուսաւոր պատուհաններին, որոնք այնպէս մեղմիւ թարթում են Մկօին, գիւղին, աշխարհին և կարծես ասում են. «եկէք, եկէք, զարմանալի բան է կատարվել այստեղ»։ Եւ Մկօի սիրտը լցվում է մի անհուն բերկրանքով, մի ցնծալից հաւատով դէպի աշխարհն ու կեանքը, նրա քայլվածքը աւելի կայտառ, աւելի թեթև է դառնում, նա կարծես էլ չէ գնում, այլ լողում է մութ եթերի միջից դէպի այն թարթող լոյսերը, դէպի երկնքի տակ բըբջացող զանգերը։ Սրտի զեղումն այն աստիճան յախուռն է, որ և 1902 թուականներին նոյն իսկ դիմումներ անել Ռուսաստանին պաշտպանութիւն գտնելու նպատակով։

Վերջապէս անցեալ 1902 թուին Անգլիան վճռեց վերջ տալ տիբետական թիւրիմացութիւններին և ուղարկեց յատուկ լիազօր իր կողմից գնդապետ Ինգհէօզբանդին, որը չը կարողացաւ համոզել տիբետցիներին դաշն կապելու։ Այն ժամանակ Անգլիան ուղարկեց դէպի Տիբետ գեներալ Մակդօնալդին 3000 հոգի զօրքով։ Մակդօնալդ գրաւեց Կումբի աւանը և սկսեց արշաւել դէպի Տիբետի Գիանգ-Ցզէ քաղաքը։ Ինչպէս յայտնի է հեռագիրներից, անգլիական զօրքերը ունեցան մեծ ընդհարում տիբետական զօրքի հետ։ Անգլիացիները զինված առաջնակարգ հրացաններով և Մակսիմի թնդանօթով ցրվեցին տիբետական գունդը, ջարդելով նրա մեծագոյն մասը։ Անգլիացիները սպառնում են, որ եթէ տիբետցիները չը շտապեն բանակցութիւններ սկսելու, այն ժամանակ նրանք կարշաւեն նաև դէպի Տիբետի մայրաքաղաք Լհասսա։

Մենք ասացինք, որ պատերազմական գործողութիւններից դուրս Եւրօպայում տեղի ունեն և միջազգային համաձայնութիւնների երևոյթներ։ Ֆրանսիան և Անգլիան յատուկ դաշնագրով լուծեցին մի քանի կնճռոտ միջազգային հարցեր, որոնց մասին խօսել էինք մեր լրագրում։ Քաղաքական մամուլի կարծիքով դաշնագրի մէջ կան կէտեր, որոնք դեռ յայտնի չեն հասարակութեան և վերաբերում են Հեռաւոր Արևելքին։ Եւրօպական միւս պետութիւններն էլ այժմ մշակում են զատ-զատ դաշնագրերի ծրագիրներ, փոխադարձ զիջումներով կարգաւորելու իրանց միջազգային յարաբերութիւնները միմեանց հետ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲԵՄԸ

—

Հեռագրական գործակալութեան հաղորդագրութիւնները տալիս տեղեկութիւններ կռւող կողմերի բռնած դիրքերի մասին։ Եալու գետը, որի ափերում ժողովում են զօրքերը, ազատվել է սառուցներից և դարձել է ընդունակ նաւարկութեան համար։

Արտասահմանեան թերթերից վերցնելով «Правит. Вѣстникъ» լրագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները, որոնք լոյս են սփռում պատերազմական բեմի ներկայ վիճակի վրայ։

Հիւսիսային Կորէայում ճանապարհները բոլորովին փչացել են։ Եապօնական ամենաթեթև սայլերի անիւները խրասուղվում են տիղմի մէջ։ Եղանակը շատ անախորժ է. ցերեկները ցուրտ չէ, բայց օդը խոնաւ է. լինում են սաստիկ քամիներ և գալիս է անձրևախառն ձիւն։ Եապօնացիների մէջ շատ կան հիւանդներ։ Զօրքերի շարժումը կատարվում է դժուարութեամբ։ Չը նայելով այն բանին, որ եապօնացիները աշխատում են շուտով հիւսիս տեղափոխվել, նրանք ստիպված են երկար կանգ առնել մի քանի տեղերում կամուրջներ շինելու համար։

Անչժուի մօտ ներկայումս եապօնական զօրքեր կան 3000 հոգի, Պակչենում ոչ աւելի քան 1000։ Ցինամպօի նաւահանգստում կանգնած են մօտ 40 մարդատար և զինուորական նաւեր։ Ըստ երևոյթին եապօնացիները դիտաւորութիւն ունեն արշաւել դէպի ռուսական բանակները անկիւնաձև և սպասում են իրանց զօրքերի կենտրոնացման։

Մանջուրիայի ցամաքային զօրքի հրամանատար գեներալ Կուրօպատկինի բանակատեղի մասին «Курьеръ» հաղորդում է արտասահմանեան աղբիւրներից, որ Կուրօպատկին մտադիր է իր գլխաւոր կայանը շինել ոչ Խարբինում կամ Մուկդէնում, այլ աւելի հարաւ, Լեաօեանում։ Այդ քաղաքը դարձված է մի մեծ զինուորական բանակ, որտեղից զօրքերը ամեն օր գնում են դէպի զանազան կողմեր։ Չինացիները վերջին ժամանակները հաճութեամբ աշխատում են. նրանց վրա ըստ երևոյթին, ազդում է ռուսաց զինուորական ոյժերի մեծանալը։

Լաօեանը գտնվում է մանջուրական Խարբին-Պորտ-Արտուրեան երկաթուղու վրայ։ Այս քաղաքի զօրքի հրամանատարը կարողութիւն ունի առանց առանձին դժուարութիւնների հետևել գործողութիւններին Եալուի շրջանում, Նիւչժուանում և Պորտ-Արտուրում։ Այս քաղաքի ընտրութեամբ գեներալ Կուրօպատկին ցոյց տուեց, որ նա սպասում է եապօնացիների շարժմանը կամ դէպի Եալուի ռուսաց դիրքերը, կամ Լաօդունեան ծովափը և կամ Նիւչժուանը։ Կուրօպատկին ըստ երևոյթին հաւանական չէ գտնում, որ եապօնացիները Եալուի վերին հոսանքից անցնեն դէպի ռուսաց զօրքի դիրքերը. իսկ ինչ վերաբերում է եապօնական գործողութիւններին Վլադիվօստոկի շրջանում, անհրաժեշտ դիմադրութիւն ցոյց կը տայ Վլադիվօստոկի նաւատորմը։ Այսպիսով հիւսիսային Կորէան և Լաօդունի ծովափը, մանջուրական զօրքի հրամանատարի կարծիքով, կը կազմեն պատերազմի գլխաւոր բեմը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԵՌ ԹԱՓԱՌՈՒՄ Է...

—

Մութը կոխեց, անհամար աստղեր պսպղացին վերևում։ Իսկ նա դեռ գնում էր...

Միշտ մի և նոյնը, միշտ անհաստատ, դողդող քայլերով, կուրծքը բաց, բոբիկ, քարից քար, հովիտից հովիտ... Ծալվում են ծնկները. հևալով, գլուխը կախ, վայր ընկնելով ու նորից վեր կենալով... նա կանգ չէ առնում։

Ահա վեր է կացել գարնան մեղմ քամին։ Բարակ մրմունջներով հոսում է լուռ դաշտերում, կանաչ լանջերն է բարձրանում, փաթաթվում է նոր ապառաժներին, գահավիժվում է սև անդունդների մէջ։ Աստղերը նրան ուղարկեցին, աստղերն են, հեզիկ ճպճպալով, խօսում նրա մէջ։ Քսվեց նա բաց կրծքին, բոբիկ ոտներին, ծածանեց թաց ճակատին կպած մազերը։ Բայց ափսոսանք—և ոչ մի վայրկեան։ Ու քայլում է նա անդադար...

Ո՞վ էր նա։

Մի մարդ։ Մէկը այն անհուն բազմութիւնից, որ աւազի պէս փռված է աստղերի տակ։ Ճամբորդ էր, բայց ոչ երէկվայ ճամբորդը։ Ո՞ր ժամանակից էին նրա մերկ ոտները այսպէս կոխոտում երկրի փշերն ու քարերը։ Վաղուց, շատ վաղուց...

Կորել է հաշիւը, յայտնի չէ թէ դարերի ինչ երկար շրջան եկաւ անցաւ այդ թափառական կրծքի վրայով, եկաւ անցաւ, բայց երբեք չը ծածկեց այդ ճնշվող կուրծքը, չը չորացրեց նրան, և այսօր էլ մենաւոր ճամբորդը չը գիտէ, թէ այդ որքան բրտինք ու արիւն կայ նրա մարմնի մէջ, որ շարունակ թաց է պահում նրա տարաբախտ կուրծքը։

Վաղո՜ւց։ Դեռ նոր ու թարմ էր աշխարհը իբրև անմեղ մանուկը իր ծննդեան առաջին առաւօտին։ Դեռ անդրանիկ արշալոյսն էր ժպտում սարերի գլխին, խոստանալով անհոգ, լիառատ, հրեշտակային կացութիւն բոլոր ապրող արարածներին։ Բայց խաբուսիկ է աշխարհը։ Առաջին իսկ օրը հեծեծանք բարձրացաւ դէպի կապոյտ երկինքը։ Ու այդ րոպէից քայլել սկսեց գլխաբաց, բոբիկ ուղևորը։

Ո՞ւր, աշխարհի ո՞ր կողմը։

Այսպիսի հարց չը կայ նրա համար։ Կողմեր չէ ճանաչում նա և չը գիտէ, թէ ինչ պիտի լինի այն տեղը, ուր նա, վերջապէս, կանգ կառնէ։ Որոնում է նա, գտնել է ուզում։ Եւ նրա քայլերը երբեք չեն հարցնում, թէ ինչ կայ առջևում—գի՞ւղ, քաղա՞ք, թէ հովուական կայան։ Միշտ և անդադար մի հարց, մի հոգս, մի հառաչանք կայ նրանց համար—ո՞ւր է նա, արդարութիւնը...

Ծովի տակ արդեօք՝ բուստի պատեանի մէջ, ամպերի մէջ գոյացող անձրևի հատիկների ծոցում, արեգակի պսակը կազմող հրային շողերի արանքում, թէ խոնարհ ու տափակ, փըտող մարդկութեան մէջ։—Այդ մի և նոյն է։ Միայն թէ գտնվի նա։

Մաշվեց, հալվեց նա այդ անվերջ, յաւիտենական ճանապարհին։ Նրա արիւնոտ հետքերը ակօսեցին երկիրը հազարաւոր ուղղութեամբ. իզուր որոնողի տառապանքները վերջ չունէին, հառաչանքն էր նրա միակ կերակուրը, արիւն-արտասուքն էր նրա ծարաւը յագեցնում։

Որոնում էր։ Բայց չէր գտնում։

Եւ ահա մի օր էլ վերջացաւ։ Ահա մի գիշերն էլ։ Քանի՞ երրորդը այդ դժբախտ թափառական կեանքի մէջ...

Չոր, անպտուղ վայրեր։ Ապառաժ, խանձված հող էր չորս կողմում։ Իրար յաջորդում են բլուրները, դժուար է քայլել, գիշերը մութ է և առանձին մի խեղդող ծանրութիւն ունի նրա խաւարը։

Դանդաղ, չը շտապելով ճանապարհն են կտրում յաւիտեան ցուրտ, անտարբեր աստղերը։ Այս գիշերը դառն գիշեր է. աշխա՞րհն է արդեօք սեղմում իր գիրկը, թէ երկինքն է ցած իջել, որ ճնշէ ու խեղդէ ամեն ինչ։ Թափառականը այս գիշեր հառաչում է աւելի խոր, աւելի ցաւագար շեշտերով։ Միայն մութը գի-

---

Նա քնքշութեամբ բռնում է Մարանի փոքրիկ գլուխը, դարձնում դէպի եկեղեցի ու բացականչում.

—Մարան ջան, մատաղ, տեսնո՞ւմ ես ժամն ինչ սիրուն է, Քրիստոս յարութիւն է առել այստեղ։

—Քրիստոսն ինձ կարմիր ձու կը բերի, հա՞, հայրիկ։

—Մարա՜ն, Մարան, դու ինչ լաւն ես։

Եկեղեցու բակը լուսաւորված է, այնտեղ մատաղի եզն է մորթված և միսը բաժան բաժան են անում։ Մկօն գիտէ, որ ուրիշ կերպ անկարելի է. առանց այն հաստավիզ եզը մորթելու Քրիստոս յարութիւն չի առնի. ինչո՞ւ է այդպէս, նա ասել չէ կարող, բայց հաւատացած է, որ Յարութիւնը միշտ այդպէս է լինում, և այն արիւնը սուրբ է, և միսը սուրբ, ամեն ինչ սուրբ է այդ գիշեր։

Ժամում Մկօն իր տեղն ունի ձախակողմեան սեղանի տակը, այնտեղ էլ արձանացաւ։ Աչք չէ կարողանում հեռացնել սեղանից, ուր տասն երկու մոմեր մի շարքով վառվում են պլպլաչին պայծառ ու գեղեցիկ, կարծես ծիծաղում են։ Վառ են նաև կանթեղները. ամենից ուշագրաւը սեղանի առաջ՝ գրակալի վրա կախվածն է, մեծ ու սիրուն. և մի վայրկեան ամեն բան մոռացած՝ Մկօն յափշտակվում է այդ կանթեղով։ Նրա կոնաձև ապակին այսօր մաքուր է, փայլփլում է լոյսի առաջ. իսկ միջի ջուրն այնքան յստակ է ու թափանցիկ, որ գալարուն, սպիտակ պատրոյգը պարզ երևում է, ինչպէս վճիտ աւազանում ծուարած ձուկը։ Ջրից վեր մոյգ ձէթն է, որի լպրծուն մակերևոյթի վրա լայն, սիրուն բոցը էլ չէ ծխում, չէ օրօրում իր գլուխը սգաւորի պէս, այլ փայլում է պայծառ լոյսով ինչպէս մի փթթած ծաղիկ։ Եւ սրբերը ժպտում են, և հրեշտակները կարծես խաղում են իրանց թևերով, բուրվառը ծխի հետ անուշահոտութիւն է տարածում, իսկ սեղանի ետևում ով գիտէ ինչ զարմանալի բան է կատարվում։ Մկօն հաւատացած է, որ արար—աշխարհի Քրիստոսը անպատճառ իրանց այս փոքրիկ եկեղեցում յարութիւն է առել, որովհետև այսպիսի կանթեղ, այսպիսի մոմեր, հրեշտակներ, սրբեր ուրիշ տեղ չեն կարող լինել, իսկ առանց դրանց յարութիւն անկարելի է։

Եւ ահա էլի ամեն տարվայ պէս հէնց այստեղ Քրիստոս յարութիւն է առել. այդ է ասում քահանան, այդ են երգում տիրացուները. բազմութիւնն իրար անցաւ, մռմռաց. բոլոր ձեռները բարձրացան դէպի ճակատները, բոլոր աչքերն ուղղվեցին դէպի սեղանը։ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց...» երեկոյից է հնչվում այդ փրկարար ձայնը։ Ի՞նչ լաւ է, Տէր Աստուած, փառք քեզ, Մկօն ցնծում է, նա կամացուկ կռանում է առաջը կանգնած Մարանի գլխին.

—Քրիստոս յարութիւն է արել, Մարան ջան։

—Ո՞րտեղ, հայրիկ։

—Ա՜յ էնտեղ, էնտեղ մատաղ, և Մկօն անորոշ կերպով ձեռքը մեկնում է սեղանի կողմը։ Ապա նա ծունկ է չոքում Մարանի հետ, գըրկում է փոքրիկ աղջկայ գլուխը, աչքերը փակում մի երջանիկ վայրկենական մոռացութեան մէջ։ Մի և նոյն ժամանակ նա լսում է ձայներ, հրեշտակների, սրբերի, բուրվառի, զանգերի, մի սքանչելի համերգ, որ կարծես երկնքից է գալիս, և էլի երկինք է գնում։

—Մարան, Մարան, մատաղ, ի՜նչ լաւ է, ի՜նչ անուշ։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց...

—

—Մկօ, այ Մկօ։

—Հը, հը... ինչ է, ուշացա՞նք Նազլու, ժամը տուե՞ն...

—Տօ, սարի արջ, ժամը նո՞ր են տուել. ինչ քնելու ժամանակ է, բակն էլ չես աւելել։

Մկօն դէն է ձգում զգլված շինելը, նըստում, աչքերն է տրորում, նայում է շուրջը. առաջը կանգնած է պառաւ տանտիկինը իր փոքրիկ թոռան հետ, ժամից ետ գալիս։

—Մկօ, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

—Վա՜յ, ինչպէս թէ Քրիստոս յարեաւ...

Մկօի գլխի վերև, ծառի ճիւղի վրա երկու ճնճղուկ յամառ կերպով ճթճթում են իրանց վաղորդեան երգը. Նրա առաջից կառքերն անցնում են երջանիկ մարդկանցով, խնդութիւնը ճխլելու բոլոր կատաղութեամբ։ Բազմամարդ քաղաքի անհագին փողոցում պճնված բազմութիւնը թափ առած շարժվում է, վաղ առաւօտին նրանք եկեղեցուց են գալիս։

Շողշողուն օր է բացվում. ամենքը և ամեն ինչ ժպտուն է, ու երջանիկ, և, կտուրները, ուր խաղում են արևի առաջին ցոլքերը, և պատերը, որոնք կիսով չափ լուսաւորված են, և, ապակիները, և մանաւանդ այն կենսուրախ բազմութիւնը։ Մկօն այժմ կամաց-կամաց յիշում է, որ ինքը քնեց մայթի վրա մեծ դարպասի առաջ մինչև ուշ գիշեր դռնապանի իր պարտքը կատարելուց յետոյ, յիշում է և զգում է, որ տեսածը մի անսիրտ երազ էր, վաղուց անցած օրերի մի հմայիչ պատկեր, որ եկաւ անցաւ նրա աչքի առաջից և չքացաւ մի սարսափելի մշուշի մէջ։ Նա այժմ ատում է այս անիծած պառաւին, որ եկաւ արթնացրեց իրան և ցրեց սքանչելի պատկերը. նա ատում է ամենքին, որոնք շարժվում են փողոցով, ատում է նոյն իսկ կառքերի ձիերին և իր գլխի վերև ճթճթացող ճնճղուկներին։

—Տօ, սարի արջ, բերանդ չէ՞ բռնում ասես «օրհնեալ է յարութիւն Քրիստոսի», ասում է տիկինը։

—Չէ։

Եւ Մկօն նայում է առաջը կանգնած կնոջը ապուշ-ապուշ, շրթունքների վրա ձևացնում է մի սպանիչ ժպիտ, որով կարծես հեգնում է պառաւին։

Կանգնած են դէմուդէմ այդ կինն ու այն մարդը, որոնցից մէկի Քրիստոսը յարութիւն է առել, իսկ միւսինը դեռ թաղված է. կանգնած են, նայում են իրար շեշտակի, և չեն հասկանում միմեանց սրտերը։

—Քրիստոսը լաւն է, Մկօ, նա կարմիր ձու է բերում, մէջ ընկաւ փոքրիկը քաշելով Մկօի երկար սպիտակ միրուքից, որ ոլոր-մոլոր կախված է կրծքին։

Մարա՜ն... յիշեց Մկօն։

—Ուո՜հ... և յանկարծ նրա դէմքի մկանունքները ձգձգվեցին, շրթունքները դողդողացին. նա քրքջաց հսկայ, խօլական ծիծաղով երկար, երկար, ապա կուրծքը կասես փուլ եկաւ, յորդ արցունքները իջան ծեր կնճռոտ այտերի վրայից ու վար գլորվելով թրջեցին նրա միրուքը։ Մկօն դանդաղութեամբ բարձրացրեց ոսկրոտ բռունցքը, սրբեց աչքերը հեկեկալով, ապա գլուխը քաշ գցեց ծնկների մէջ ու լռեց։ Երեխան յետ-յետ քաշվեց, շըրթունքներն ուռցրեց, պատրաստվելով լալ՝ նա կարծում էր, թէ ինքն է պատճառ Մկօի արցունքի։ Տիկինը փափկասրտերից չէր, նա Մկօի՝ դռնապան Մկօի վրա միշտ նայել էր այնպէս, ինչպէս սովորաբար նայում են... այդ թաւամազ, բարձրահասակ ծերուկը նրա համար պարզապէս Մկօ էր, մի մենաւոր արարած, յանկարծ գետնից դուրս եկած, կարծես առանց ծնողների, առանց կապերի աշխարհի հետ, մի Մկօ, որ այնպէս յարմար է աշխատելու ուրիշների դռներում, ուրիշների համար։ Սակայն այն զարհուրելի ծիծաղն ու արցունքը նրան շփոթեցին, նա գիտէր, որ մարդիկ այդպէս երբեք զուր տեղը չեն լալիս, ուստի մեղմացաւ, «սարի արջի» ծածուկ ցաւը նրան ճնշեց իր բոլոր ծանրութեամբ։

—Ինչո՞ւ ես լալիս, Մկօ։

—Թաղված Քրիստոսի համար, Խաթուն, թաղված Քրիստոսի։

—Քրիստոս յարութիւն առաւ տնաւեր։

—Իմը թաղված է, Խաթուն, այ էս կրծքիս տակ է թաղված և ես նրան ման եմ ածում երկրէ երկիր, դռնէ դուռ, լալիս եմ նրա վրայ։ Հէ, Խաթուն, էնքան քրիստոսներ կան, որոնք էլ երբեք յարութիւն չեն առնում, իմն էլ այ էստեղ է, էս սրտիս մէջ և նրա թաղված տեղը մխում է, մխում է, մխում... մի ժամանակ նա էլ ամեն տարի... յարութ...

Մկօի ձայնը կրկին խզվեց, նա կրկին գլուխը թաղեց ծնկների մէջ և հեկեկաց։

Շփոթված կինը հեռացաւ։ Մկօն այսօր շատ տարօրինակ էր. երեխան իր խոշոր, վախեցած աչքերով յետ յետ էր նայում, իսկ ծեր դռնապանն իր պատառոտած շինելի տակ կծկված լալիս էր մեն մենակ բոլոր նրանց համար, որոնք իրանց կրծքի տակ մի մեծ, մութ ցաւ ունեն պահած, մի թաղված Քրիստոս, որի յարութեանն են սպասում, որի յուսով են ապրում։

Ա. Ահարոնեան

ռէ, թէ ինչ տանջանքներ են գալարում նրան. Ձորերը միայն արձագանք են տալիս այդ ցաւերին. Քամին դադարեց, կարծես ամաչելով որ գգուանքներ է տարածում այս տանջանքների վայրում. Օդ չը մնաց, ինչ-որ սոսկալի անձկութիւն բռնել, սեղմում է կուրծքը և թոյլ չէ տալիս, որ նա շարժվի. Վերջ է. Արիւնով լցված, լայնացած աչքերը անօգնական դէս ու դէն են թափառում. Եւ ուզում են իմանալ—վերջ է.

Բլուրների լանջերով, ձորերի յատակով, քարերի վրայով առաջ է տանում նա իր բազմադարեան մաշված մարմինը. Տանում է ուշաթափ. աչքերը փակեց, գլուխը աւելի կախ արաւ կրծքի վրա, ամեն ինչ մնաց ճակատագրի դիպուածի կամքին.

Վերջ չէ. Մի օր էլ բացվեց նրա գլխի վրա. Փախաւ գիշերային աղջամուղջը, առաւօտեան հովերի հետ մի ինչ-որ կազդուրող, հոգի պայծառացնող թարմութիւն եկաւ. Հեռու շրջականները արեգակի լոյսի տակ բացվեցին. Մարդկային բնակութիւնը գրաւում էր.

Եւ ահա նա մի քաղաքում է. Այդտեղ ինչ-որ իրարանցում կայ, ինչ-որ դղրդոց է ընկել. Վազում են մարդիկ, խմբեր են կազմում, աղաղակներ են բարձրացնում.

Յանկարծ ճամբորդը մի սուր ցնցում զգաց իր սրտի խորքում. Միթէ ճիշտ է. միթէ դարաւոր թափառման վերջն է. Ամեն ինչ այդպէս է ասում. Նա գտաւ. Վերջապէս գտաւ արդարութիւնը.

Առոյգ, բարձրագլուխ քայլում է նա, աշխատում է ժամ առաջ տեսնել իր երջանկութիւնը.

Բայց այս ինչ է. Այսքան ժամանակ որոնել է նա, և իր յաւիտենական թափառումների մէջ, իր տանջանքների գնով հասել է այն յոյսին, թէ ինչ կերպարանք պիտի ունենայ իր որոնածը. Մի անհասանելի վեհ կերպարանք. Արեգակներով պսակված մի վիթխարի ոյժ, երկնքի լոյսերից հիւսած, աստղերից կազմած. աթոռի վրա բազմած. Ամեն ինչ խոնարհվում է նրա առաջ—ծով ու ցամաք, գազան, մարդ. Եւ իր բարձր գահից նա որոտում է, կայծակներով շանթահարում է, սարեր շարժող, ցասումով պահանջում է, որ արդար լինի աշխարհը, որ ազատութիւնը տիրէ մի ծայրից մինչև միւսը, որ դահիճ ու զոհ չը լինեն, որ թոյլը չը հարստահարվի, որ ամենքը եղբայր դառնան, սրբեն արտասուքները, կանգնեցնեն արիւնը, հաւասար ու համերաշխ լինեն.

Այսպէս էր երևակայում իր որոնածը. Իսկ ինչ էր տեսնում.

Գնում է ամբոխը զառիվեր ճանապարհով, գնում է դէպի սարը և հռհռում է, ծաղրում է, հայհոյում. Իսկ առջևից մէկը մի ահագին, ծանր խաչ է տանում իր ուսի վրա. Փայտի ծանրութիւնը ճնշում է նրան, փշից շինած մի պսակ կայ հագցրած նրա գլխին, արեան կաթիլները քրտինքի կաթիլների հետ խառնված՝ ընկնում են հողի վրա. Նրան շտապեցնում են, նրան քշում են, իսկ նա ընկնելով ու վեր կենալով, տանջվելով, բայց հաստատ ու անխռով տանում է իր խաչը, տանում է նրա վրա մեխվելու համար. Ոչինչ չէ կարող նրան յետ մղել. լուռ է նա, միմեանց սեղմված շրթունքները ոչ գանգատ ունեն, ոչ դժգոհութիւն, ոչ կիրք ու ատելութիւն են յայտնում. Նահատակ է, գնում է իր մահով յաղթանակելու, իր արիւնով աշխարհ նուաճելու.

Ա՞յս է.

Այո, միայն այս. Չորս կողմում ուրիշ ոչինչ չը կայ, բացի տանջողներից և տանջվողներից. Ոչ հրաման, ոչ կայծակներ, ոչ իշխանութիւն.

Արդարութիւնը—ծանր խաչ.

Ահա ինչ տեսաւ չարաբախտ ճամբորդը այնքան տառապանքներից, այնքան թափառումներից յետոյ.

Բայց այդ խաչը պէտք է տանել, պէտք է տեղ հասցնել.

Ահա ինչ իմացաւ նա.

Եւ այն օրվանից նա էլի թափառում է. Բայց այլ ևս անծանօթ չէ նրան ճանապարհը, այլ ևս անհասկանալի, երևակայական չէ այն, ինչ որոնում է նա.

Եւ գնում է նա թէև դարձեալ տանջվելով, բայց առոյգ, անյողդողդ քայլերով.

Գնում է, որ հասնէ. Եթէ կանգնէ, չի հասնի...

Լէօ

ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

III

Մօտ երեսուն տարի առաջ էր. Անգլիայի մայրաքաղաքում՝ մշուշապատ Լոնդոնում ապրում էր Դէնիսսօն անունով մի մարդ. Նա «բարձր» դասից էր. ունէր մեծ հարստութիւն, պատիւ, մեծարանք. Նրա ապարանքները հրաշալի էին տեսքով, փարթամութեամբ, նրա հասարակական դիրքը նախանձելի էր շատերի համար.

Սակայն այդ ամենը յագուրդ չէր տալիս նրա սրտին, նրա բարոյական պահանջներին. Նա ձգտում է դէպի հեռուն, Լոնդոնի յետ ընկած թաղերը, որտեղ ամենաաղքատ ազգաբնակութիւնն էր ապրում, որտեղ ամենածայրահեղ թշուառութիւնն էր բուն դրել.

Նա այն համոզմունքին էր, թէ ուժեղները պարտաւոր են օգնել թոյլերին և այդ օգնութիւնը պէտք է լինի ոչ միայն փողով, նիւթական բարեգործութեամբ, այլ աւելի խոշոր անձնազոհութեամբ. Իսկական բարեգործութիւնը ոչ թէ հարստութեան մի քանի փշրանքներ բաժանելն է, այլ այն, երբ մարդ կարօտեալներին բաժին է տալիս իր ամբողջ ունեցածից՝ երբ իր գիտութեամբ լոյս է սփռում խաւար որջերում, իր կարեկցութեամբ մխիթարում է թշուառներին, իր մերձաւորութեամբ թեթևացնում նրանց կեանքի ծանր խաչը...

Ահա այդ խաչը կրելու համար Դէնիսսօնը մի գեղեցիկ օր թողնում է իր ապարանքները, իր փարթամ կեանքը և բնակութիւն հաստատում Լոնդոնի ամենաաղքատ թաղում, որտեղ թշուառութիւն էր տիրում և շարունակ վշտի ու հեծեծանքի մրմունջներ հնչում. Նա այդ մրմունջները դադարեցնելու գործին է նուիրում իր ամբողջ հարստութիւնը, խելքը, գիտութիւնը, հանգստութիւնը.

Շատերին այդ վարմունքը տարօրինակ է թւում, շատերը Դէնիսսօնին խելագար են համարում. Սակայն ժամանակը ցոյց տուեց, որ խելագարութիւն չէր դա, այլ բարոյական մի լաւ սերմ, որ շուտով իր արմատներն արձակեց և առատ պտուղներ տուեց.

Դէնիսսօնի մահից յետոյ նրա օրինակին հետևեցին ուրիշները՝ կրթված երիտասարդներ, ուսուցիչներ, բարձրաստիճան պաշտօնեաներ. Անհատական ձեռնարկութիւնը դարձաւ ընկերական, հասարակական և այդպիսով ծնունդ առացան նոր տիպի «աղքատախնամ ընկերութիւններ», բայց, ի հարկէ, ոչ այն ձևով, ինչպէս մեզանում է.

«Անհրաժեշտ է երկար ապրել չքաւորների մէջ, ասում է այդ ընկերութիւնների ծրագիրը, որպէս զի կարելի լինի հասկանալ նրանց վշտերը, կարիքները և ժամանակին օգնութիւն հասցնել, հաւատ ներշնչել, բարեկամանալ՝ մի խօսքով ամեն կերպ օգտակար դառնալ. Պէտք է աղքատ թաղերը մասերի բաժանել և իւրաքանչիւր կենտրոնում խմբերով ապրել, որպէս զի թշուառների սեռի ու հասակի համեմատ էլ օգնողներ, խնամողներ լինեն»...

Աղքատախնամ այդ գաղութները կամ, ինչպէս անգլիացիներն են ասում՝ «Settlements»-ները 1885 թ. միայն երկու հատ էին Լոնդոնում, իսկ այժմ—27. Նոյնանման կազմակերպութիւններ կան նաև Գլասգօում, Էդինբուրգում, Մանչէստրում, Լիվերպուլում և ուրիշ քաղաքներում. Նոյն օրինակին հետևել է նաև Ամերիկան իր Բօստօն, Չիկագօ, Ֆիլադելֆիա և այլ քաղաքներով.

Բայց նշանակութիւն ունի ոչ միայն քանակը, այլ և որակը. Ո՜րքան բարերար, ո՛րքան մարդասէր գործ են կատարում այդ ընկերութիւնները. Նրանք միշտ շփվելով աղքատ դասակարգի հետ, մօտիկից ճանաչում են նրա կարիքները, ցաւերը և ըստ այնմ օգնութիւն հասցնում, հիւանդներին խնամում, փոքրերին դաստիարակում, ուսում տալիս, անգործներին աշխատանքի դնում և այլն և այլն. Մի խօսքով այդ ընկերութիւնները կարօտեալների վերաբերմամբ նոյն դերն են կատարում, ինչ որ հոգատար հայրը իր զաւակների վերաբերմամբ.

Իսկ մեզանում կա՞յ արդեօք այդ ձևի բարեգործութեան գէթ մի նշոյլ.—Ո՛չ. Այն ինչ կարիքը օրէցօր աւելանում է, թշուառների բանակը ստուարանում.

Հարկաւոր է ուրեմն հետևել մեզանից աւելի քաղաքակիրթ ազգերի օրինակին և գիտակցօրէն կատարել մարդկային բարոյական պարտքը.

Հարկաւոր է բարեգործութեանը մշտական և խելացի ձև տալ.

Օգնեցէք ուրեմն ձեր շուրջը վխտացող թշուառներին, բայց ոչ միայն Զատկի կամ մի այլ տօնի առիթով, այլ մշտապէս.

Օգնեցէ՛ք, աշխատելով բարձրացնել ընկած, դժբաղդացած անհատներին և կանգնեցնելով նրանց ինքնօգնութեան ճանապարհի վրա.

Օգնեցէ՛ք առանց դժգոհութեան, մեծամտութեան, առանց վիրաւորանք հասցնելու անհատական արժանապատւութեանը.

Օգնեցէք, միշտ համոզված լինելով, որ ձեր արածը բարոյական պարտականութիւն է և ոչ ողորմութիւն.

Ե. Թոփչեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Մարտի 22-ին

Հինգշաբթի, մարտի 18-ին, քաղաքային վարչութեան դահլիճում տեղի ունեցան մեր քաղաքի նոր իրաւասուների ընտրութիւնները առաջիկայ 1903—1907 թ. քառամեակի համար. Քաղաքիս այժմեան աւագ Գր. Մովսիսեանի հիւանդութեան պատճառով, նահանգապետի հրամանով այդ օրը ընտրութեան ժողովին նախագահեց աւագի օգնական Յար. Ղազարոսեանը. Կառավարութեան կողմից ընտրութեանը ներկայ էին գաւառապետի պ. օգնականը, քաղաքիս պրիստաւները և այլն.

Երեք հարիւր ընտրողներից եկել էին ընտրութեանը միայն 37 հոգի, մի թիւ, որ բոլորովին դատապարտելի է մեր քաղաքի բնակիչների համար. Եթէ մի այսպիսի ընտրութիւն, որից կախված են մեր քաղաքի և հասարակութեան բարեկեցութեան հարցերը, մեր ժողովրդին չէ հետաքրքրում, ապա ինչ տեսակ հարց պէտք է հետաքրքրէ.

Ժողովը, ժամը 12-ից անց, բանալով աւագի պ. օգնականը, յայտնեց, որ պէտք է ընտրվեն քաղաքի համար նոր 15 իրաւասուներ և 3 փոխանորդներ (կանդիդատներ). Նախ քան ընտրութիւն սկսելը, պ. օգնականը օրէնագրքից կարդաց ընտրութեանը վերաբերեալ մի քանի կէտեր, թէ ինչպիսի անձինք կարող են ընտրութիւն անել և ընտրվել իրաւասուներ.

Ապա բաժանվեցին թերթիկներ՝ իրաւասուների 15 թեկնածուների անունները նշանակելու համար. Թերթիկներով թեկնածուներ նշանակվեցին 55 հոգի, որոնցից մի մասը ժողովին ներկայ չը լինելով և օրինական թւից քիչ ձայն ստանալով՝ հրաժարված համարվեցին, իսկ միւս մասն էլ ներկայ լինելով՝ անձամբ հրաժարվեցին քուէարկվելուց, ուստի մնացին քուէարկվելու միայն 25 հոգի. Գաղտնի քուէարկութեամբ այդ 25 անձերից իրաւասուներ կամ լիազօրներ ընտրվեցին հետևեալները՝ պ.պ. Գր. Մովսիսեանը (քաղ. աւագը), Գր. Բուդուղեան, Գր. Զաթալբաշեան, Ման. Մովսիսեան, Յար. Ղազարոսեան (աւագի օգնական), Գ. Քուփալեան, Յակ. Ղասաբաշեան, Կար. Մարուքեան, Յով. Չիլինկարեան, Վ. Աղաջանեան. Լ. Գաբոյեան, Սեդ. Վիրաբեան, Ստ. Ազնաւուրեան, Մկ. Չիրքիլեան և Աւ. Ասլանեան. Իսկ սրանց փոխանորդներ կամ կանդիդատներ ընտրվեցին պ.պ. Ման. Գիւլպէնկեան, Մ. Մուրադեան և Տիգ. Ղանալանեան.

Այս նոր ընտրվողներից, 10-ը նախկին իրաւասուներից են և միայն 8-ը նոր անձինք են. Այս նոր ընտրված իրաւասուները նահանգապետից հաստատվելուց յետոյ ստանձնելու են իրանց պաշտօնները և նախ ընտրելու են քաղ. նոր աւագ, նրա օգնական և քաղ. վարչութեան նոր կազմ. Թէ արդեօք ո՞վ է լինելու մեր ապագայ քաղաքային աւագը, առ այժմ դրականապէս ոչինչ չէ կարելի ասել, դա կախված է իրաւասուների քմահաճոյքից. Միայն հաւանականութիւն կայ կրկին վերընտրելու մեր այժմեան աւագ՝ Գր. Մովսիսեանին, իսկ նրա օգնական՝ Յ. Ղազարոսեանին.

Ընտրող

ՆԱՄԱԿ ՂՐԻՄԻՑ

Արմեանսկ, մարտի 8-ին

«Այս տարի մեր քաղաքում ամեն ինչ թանգ է և նոյն իսկ շատ անհրաժեշտ բաներ յաճախ հազիւ են ճարվում»....

Ահա թէ ինչ է ասում ամեն մի քաղաքացի, երբ խօսք է լինում ապրուստի մասին. Նախորդ թղթակցութիւններից մէկում ասել էի, որ համարեա բացի հացից ու մսից՝ մնացած բոլոր ուտելեղէնները գիւղերից են բերում ռուս գիւղացիները, այն էլ միայն կիրակի օրերը, երբ քաղաքում բազար է լինում.

Այս տարվան թանգութիւնը բացատրվում է հետևեալ երկու գլխաւոր պատճառներով.—Նախ՝ ինչպէս տեղեկացանք, անցած երկու-երեք տարին երաշտ է եղել, որից գիւղացիները մեծ վնասներ են կրել իրանց տնտեսութեան մէջ. այս տարի էլ աշնանացանը անհամեմատ բարեբեր լինելով՝ գիւղացիներն աւելի հոգ են տանում իրանց ապրուստի այդ աղբիւրի վրա և աւելի ժլատ, խնայող դառնում ծախսելու մթերքների վերաբերմամբ, որովհետև երաշտ տարիներում ամեն ինչ սպառվել էր. Բացի սրանից շատ վաճառականներ հաւաքում են գիւղերից կենսական և այլ մթերքներն ու հեռաւոր տեղեր ուղարկում, որից վնասվում է մեր քաղաքը. Երկրորդ պատճառն էլ մեր «պատմական» անանցանելի ցեխոտ հաղորդակցութեան ճանապարհներն են. Այս տարին մեծ մասամբ անձրևային լինելով՝ քաղաք բերող ճանապարհները համարեա անպէտք դարձան.

Քաղաքում փայտը ամենևին գործածութեան մէջ չէ, որովհետև չը կայ. մի անխելքը պիտի հարիւրաւոր վերստերից սայլով փայտ բերէ Արմեանսկ. Բայց դրա փոխարէն գործ են ածում չորացրած՝ ոչխարի կամ տաւարի աթարը (кирпичъ), որի լաւ տեսակի սաժէնը 22—25 րուբլով է ծախվում. Յիշելն աւելորդ է, որ դա փայտի տեղը չէ կարող բռնել. Էժանին պրծնելու համար շատերը փուշ (խորայ) են վառում... Ինչպէս աթարը, նոյնպէս և փուշը դարձեալ ռուս գիւղացիներն են քաղաք բերում.

Քաղաքի խանութներում էլ էժանութիւնը չէ թագաւորում. Ոչխարի մսի ֆունտը մի քանի օր առաջ ծախվում էր 25 կոպէկով, իսկ տաւարի մսի գինը—minimum 12 կոպէկ էր. Մսի այսպէս թանգութեան պատճառը այն է, որ քիչ է մորթվում, որովհետև երաշտ տարիներում գիւղացիները ստիպված են եղել խիստ էժան գնով ծախել իրանց մացու անասունները—նրանց համար ուտելիք չունենալու պատճառով—իսկ այժմ նրանք կամ բոլորովին չեն ծախում կամ շատ քիչ՝ որովհետև նախ՝ ուտելիք չունեն նրանց համար և երկրորդ, որ իրանց տէրերին հարկաւոր են նրանք.

Քաղաքիս վաճառականների առաջացրած թանգութեան պատճառը բացատրվում է մի-միայն երկաթուղու բացակայութեամբ. Տեսնել պէտք է, թէ ձմեռ և առհասարակ ցեխ ժամանակը ինչ դժվարութիւններ են առաջ գալիս Արմեանսկ—Ջանկոյ (հարաւ) և Արմեանսկ-Կախօվկա (հիւսիս) ճանապարհների վրա. Վա՛յ այն անհեռատես վաճառականին, որը մի քիչ ուշ կապսպրէ մեծ քաղաքներից ստացվող ապրանքը,—բոլորը շաբաթներով ու մինչև անգամ ամիսներով կը պառկեն Ջանկոյ կամ Կախօվկա կայարաններում, եթէ ձիւնը կամ անձրևը անսպառ փոշուց ցեխի մի հաստ ու անտանելի շերտ է փռել հաղորդակցութեան այդ միակ ճանապարհների վրա.

Յիշում եմ, ինչպէս ձմեռվան սկզբին մի քանի խանութներում շաքար ու նաւթ չէին ծախվում երկար ժամանակ, որովհետև Օդեսայից ապսպրած ապրանքները ուշացել էին և ցեխի պատճառով մնացել ճանապարհին. Կամ պէտք է շուտ բերել տալ քաղաք, ի հարկէ, շատ թանգ ճանապարհածախսով, ուրեմն և թանգ ծախել, կամ՝ սպասել մինչև ճանապարհները բացվեն, եթէ վնասվելու երկիւղ չը կայ. Այս է մեր վաճառականի դրութիւնը. Այսպէս թէ այնպէս տուժողը դարձեալ քաղաքացին է, իսկ ազգաբնակութեան գերակշռող մասն աղքատ է.

Խմելու—քաղցր ջուրն անգամ թանգ է այստեղ. Խմելու ջրերը ջրկիրները հեռու տեղերից են բերում, իսկ շատ ցեխ եղած ժամանակը չեն էլ բերում, կամ՝ շատ քիչ. Քաղաքի ջրհորների ջրերը աղտեղիական են, որ միայն լուացքի համար են պէտք գալիս.

Հրէական ընկերութիւնը անցեալ դեկտեմբերի վերջերից քաղաքի համար մի բաղանիք շինեց, որի կարիքը խիստ զգացվում էր (որովհետև քաղաքի մէջ մի քանի հարուստներ միայն ունեն բաղանիք իրանց տներում և միայն իրանց համար), բայց տեսնելով, որ այցելուները շատ քիչ են՝ անուշ ջուրը փոխեց աղի ջրի, որն ուղղակի չէ ծառայում նպատակին. Զարմանալի է քաղաքացիների վարմունքը.

Խաչ. Տէր-Ենօքեան.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 26-ին

Ինչպէս յայտնի է, քաղաքիս մէջ սովորութիւն են շինել շաբաթ օրերը քաղաքիս աղքատները խանութէ խանութ շրջել եւ ողորմութիւն հաւաքել. Նկատելով՝ որ դրանց ահագին մեծամասնութիւնը աղքատութիւնը իր համար արհեստ են շինել եւ շահագործում են ժողովրդի զգացմունքները, իսկ ոմանք աղքատի պատրուակով թոյլ են տալիս իրանց՝ խանութներից գողութիւն անել—ես որոշեցի՝ ընդունված կոպէկական աննպատակ ողորմութիւն տալու փոխարէն՝ տարէնը երկու անգամ, այն է Ջրօրհնէքի օրը եւ Զատկին մի որոշ գումար յատկացնելով իսկական կարօտ աղքատներին՝ ուղարկել յարգոյ խմբագրութեանդ, բաժանելու այն՝ ըստ ձեր բարեհաճեցողութեան։ Սրա հետ վերոյիշեալ նպատակի համար ուղարկում եմ Զատկին բաժանելու վեց րուբլի։

Ա. Ղ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գետաշէն, մարտի 21-ին

Գետաշէն հանքում խմբված է շրջակայ գիւղացիների մի աննշան խումբ, ընտանիքաւոր կամ անընտանիք անձնաւորութիւններից բաղկացած։ Բարսում, Գառնակեր, Ջագիր, Զարդախլու, Բաղաձոր, փոք հայաբնակ գիւղերի եւ Թրքաբնակ Սօղիւտոու, Ղուլու եւ Ղոլխտամ գիւղերի երիտասարդ ոյժերի մեծամասնութիւնը ծառայում են Գետաշէն հանքում, բայց շնորհիւ բանուորների տնտեսական սուղ դրութեանը, նրանք չունեն ո՛չ մի մտաւոր պաշար. գիր իմացողները կամ հետաքրքիր անձնաւորութիւնները բացառութիւն են կազմում։ Մենք, Գառնակեր գիւղացի յիշեալ հանքում ծառայողներս, մեր սուղ նիւթական միջոցներից եւ մ՛ր ապրուստին հացիւ բաւականացող ռոճկից մի կողմ դնելով, հարկաւոր ենք համարում 20 րուբլին հաւաքելով հետեւեալ 10 անձնաւորութիւններից ուղարկել «Մշակի» խմբագրութեանը ստանալու լրագրից համարները։ Անձնաւորութիւններն են. Կարապետ Բալեանց, Մարգար Վարդանեան Մելիք-Անտօնեանց, Եփրեմ Խօջայեանց, Բէգլար Խօջայեանց, Սէրգի Տէր-Յարութիւնեանց, Գէորգ Գէորգեանց, Միքայէլ Յովհաննէսեանց, Վարդան Գալլաբեանց եւ Սափար Սափարեանց, եւ ուղարկել նշանակված հասցէով։

Գառնակերցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւեալ համարը լոյս կը տեսնի Զատկից յետոյ, ուրբաթ օր, ապրիլի 2-ին։

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $^{1}/_{2}$ թերթից։

Զատկական տօներին չքաւորներին բաժանելու համար ստացանք. 1) Մի անձից, որ ստորագրել է իր նամակը «Զօկ» ծածկանունով, երեք րուբլի, 2) Թոմաս Խանգուլեանից վեց րուբլի, 3) Մի անձից—մէկ րուբլի։

Ֆէրգանեան նահանգի Կօկանդ քաղաքից, պ. Խաչատուր Աղախանեանց ուղարկել է «Մշակի» խմբագրութեանը 66 ր. աղքատներին բաժանելու համար զատկական տօներին։

Պետերբուրգի «կառուցանող ընկերութիւնները, ներկայացուցիչներ են ուղարկում դպրոցական առողջապահութեան հարցերի համար Նիւրէնբերգում լինելիք կօնգրէսը, որի նիստերը սկսվելու են ներկայ տարւայ ապրիլի 4-ին։ Բոլոր երկրներից հրաւիրված են կառուցանողներ, որոնք բժիշկների հետ միասին պէտք է խորհրդակցեն դպրոցական շէնքերի առողջապահութեան, նրանց կառուցման և ձեւի ու կարգի մասին, դպրոցական հանրակացարանների, դպրոցական շէնքերի և բնակարանների առողջապահական դրութիւնն ուսումնասիրելու մեթօդների մասին, նոյնպէս և դպրոցական արտաքնոցներ և սաների համար սանդուղքներ կառուցանելու մասին։ Կօնգրէսի պատուաւոր նախագահն է ընտրված բաւարական իշխան Լիւդովիկոսը, որ բժշկական կոչում ունի։

Թիֆլիսի քաղաքային ապաստարանների յանձնաժողովը՝ մարտի 25-ին կայացրած իր նիստում որոշեց, նախկին տարիների նման, այս տարի եւս ընծերով հիւրասիրել թէ գիշերօթիկներին և թէ վեցերորդ ու տասներորդ քաղաքամասերի չքաւոր բնակիչներին։ Վերջիններիս կը բաժանվի և փող։ Այդ նպատակի համար յատկացված է 250 ր., որից 50 րուբլին նուիրել է քաղաքագլուխը, 50 րուբլին պ. Մարկոս Դօլուխանեանը, իսկ մնացածը մի մարդ, որ չէ ուզեցել իր անունը յայտնել։

Զեմստվօները ներկայացնում են Եւրոպական Ռուսաստանի տեղական՝ գաւառական ու նահանգական վարչութիւնները։ Դրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ տեղական ժողովրդի ընտրութիւնով կատարված մարմիններ զուտ տեղական, զեմստվօյական կարիքների համար։ Դրանք գոյութիւն ունեն Եւրոպական Ռուսաստանում, որովհետև այնտեղ ազգաբնակութիւնն աւելի պատրաստված է համարվում այդ տեսակ ներքին վարչական կազմի համար, քան պետութեան միւս մասերի ազգաբնակութիւնները։ Սիբիրում զեմստվօներ չը կան։ Ահա այդ առիթով Ալ. Ամֆիտէատրով յայտնի հրապարակախօսը «С.-Пет. Вѣд.» լրագրում մանրամասն դատողութիւններով ու փաստերով ապացուցանում է, որ Սիբիրի գիւղացին արդէն պատրաստ է, գուցէ աւելի պատրաստ զեմստվօի համար, քան այժմ զեմստվօներ ունեցող շատ նահանգների բնակիչներ։ «Ես համոզված եմ, ասում է նա իր յօդուածի վերջում, որ եթէ զեմստվօյական բարենորոգութիւնը վերջապէս կը լուսաւորէ Սիբիրը, այն ժամանակ Օբի և Ենիսէյի վերին ափերի վրա մենք կը տեսնենք ամենագործունեայ, գործնական և ամենից աւելի իրանց անունը արդարացնող զեմստվօյական ինքնավարութիւններ ամբողջ Ռուսաստանում»։

ԱԲԱՐԱՆԻՑ (Երևան. նահ.) մեզ գրում են. «Ամեն կողմից լսվում է, որ արդէն տարածվել է գարնան ջերմութիւնը. շատ տեղերում գիւղացիք սկսել են իրանց վար ու ցանքսը, իսկ այստեղ, Աբարանում, կարծես թէ ձմեռը նոր է գալիս։ Ձիւնի հաստութիւնը հասնում է մէկ արշինի, ամբողջ գաւառը սպիտակ սաւանով է պատած և աւելի սարսափելին այն է, որ վերջին ժամանակներս լինում է սաստիկ բուք, դրա համար էլ, գիւղացիների ասելով, մեր երկրի անունը դրված Աբարան, բուք ու բորան։ Մարտի 15-ին Ղզղանֆար գիւղից երկու վերստ հեռաւորութեամբ չորս հովիւներ, մօտ հարիւր ոչխարներով, դէպի Երեւանի կողմը գնալիս, ճանապարհին սաստիկ բուք է բարձրանում, մոլորվում են և մնում են ձիւնի տակ։ Հետեւեալ առաւօտը գտնում են գիւղացիք և խեղճերին ոչխարների հետ սառած դրութեան մէջ են գտնում. հովիւներից երկուսը յոյս են տալիս առողջանալու։ Այդ դէպքից մի քանի օր առաջ Համամլու գիւղի մօտ բուքից խեղդվում է մի հովիւ իր քառասուն ոչխարներով. այդ լուրը հասնում է մօտակայ Թուրք գիւղը և օգնութեան տեղը նրանք ոչխարներին տեղ են տալիս իրանց փորում և խեղճ գիւղացիների ոչխարներով Թուրք հարեւանները դիմաւորում են իրանց բայրամին։ Եթէ եղանակը այսպէս անցնի մի քանի օր էլ, գիւղացիների դրութիւնը շատ կը վատանայ, որովհետև արդէն վերջանալու մօտ է նրանց անասունների պաշարը»։

ՍՈՒԽՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մարտի 14-ին պ. Անդրանիկ իր կնոջ՝ տիկին Ազնիւի հետ՝ տեղական սիրողների մասնակցութեամբ ներկայացում տուեց Պարոնեանի «Բաղդասար Աղբարը»։ Թատրոնը լիքն էր. ժողովուրդը՝ չը նայած գների սղութեան՝ որպէս բարոյական զուարճութիւն, շտապել էր ներկայ գտնվել, սակայն սպասածը չը գտնելու պատճառով դժգոհում էր, թէ «տարէնը մի գաւիկ, այն էլ նաւակատիկ»։

ՓԻՐԱԶԱՄԱԼ գիւղից (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Այս գիւղից մօտ 25 վերստ դէպի արեւելք—Մուղանու դաշտավայրում գտնվող Թրքաբնակ գիւղերից գալիս են մեզ մօտ խոտ գնելու. նրանք գանգատվում են խոտի պակասութեան և անասունների կոտորածի մասին։ Մի հարուստ Թուրք, որ մեզ մօտ խոտ գնելու էր եկել, պատմեց հետեւեալ աղետալի դէպքը։ Ունէի 3000 ոչխար, ասում է Թուրքը, որոնցից կոտորվել են 1500 հատ, ինքս էլ չը գիտեմ թէ ինչից, արդեօք կերի պակասութիւնից, թէ մի որ և է ցաւից։ Մեր կառաբեալ Թանգութիւն է։ Մեր շրջակայքում—Աղդամ կայարանում, որը գտնվում է մեզանից 10 վերստ հեռաւորութեան վրա, ոչխարի միսը ծախվում է 18—20 կոպէկ, որ մեզ համար տարօրինակ է. մեզանում ամենաթանկ ժամանակը եղել է ոչ աւել 10-ից 12 կ.։ Նոյն տեղը կիրակի օրերը լինում է մեծ առեւտուր, ուր մօտակայ գիւղացիները մեծ քանակութեամբ ապրանք են արտահանում ծախելու. ի միջի այլոց մօտերքս քերթում են մեծ քանակութեամբ անասունների կաշիներ, ինչպէս է, օրինակ՝ ուղտի, ձիու, գոմշի, եզան և ոչխարի. այդ արդէն ապացոյց է, որ անասունների կոտորածը մեծ է։ Ցորենը արժէ 1 ր.—1 ր. 10 կ., գարին 80 կոպէկ»։

ՓԱՇԱԼՈՒ գիւղից (Շարուր-Դարալագեազի գաւառ) մեզ գրում են. «Ահա ամբողջ երեք ամիս է, ինչ մի անհասկանալի տաւարի ցաւ է սկսել մեր գիւղում։ Շաբաթ չէ լինում, որ մի 2—3 անասուն զոհ չը գնայ այդ ցաւին։ Առհասարակ այդպիսի դէպքերում գիւղացիք աշխատում են վարչութեան չը հասցնել հիւանդութեան լուրը. ամեն ջանք գործ են դնում ծածուկ պահելու հիւանդութիւնը, զգուշութեամբ կորցնելով նրա զոհերի հետքերը։ Եւ դրա պատճառը գլխաւորապէս այն է, որ վարչութիւնը կապում է այն գիւղը, ուր տաւարի հիւանդութիւն կայ, որպէս զի դրացի գիւղերի անասունները չը վարակվեն, իսկ կապելուց մեր գիւղականները շատ են վախենում, որովհետև այն ժամանակ նրանք իրաւունք չունեն տաւարը դաշտ հանելու մինչև որ հիւանդութիւնը կը վերջանայ։ Բայց ձմեռը գիւղացիք այդ բանից չեն վախենում, որովհետև առանց այն էլ անասունները դաշտ չեն հանվում։ Հաւանական է, որ այդ աչքի առաջ ունենալով, մեր գիւղացիք այս անգամ իրանք իմացրին վարչութեան, որ գիւղում տաւարի ցաւ կայ։ Եկաւ անասնաբոյժը, սկսեց քննել կենդանիներին, բայց ոչ մի հիւանդութիւն չը գտաւ և վերադարձաւ։ Սակայն զոհերի թիւը գնալով սաստկանում է և սարսափ է տարածում գիւղացիների վրա. կան այնպիսիները, որոնք բոլորովին զրկվեցին իրանց անասուններից այս երկու-երեք ամսվայ ընթացքում»։

ԱԲԱՐԱՆԻՑ մեզ գրում են. «Անցած տարւայ նոյեմբեր ամսից մինչև այժմ շարունակվում է անասունների հիւանդութիւնը և տանում է շատ զոհեր։ Շնորհիւ կառավարութեան ձեռք առած միջոցների՝ ժանտախտը այնքան ծաւալ չը կարողացաւ ստանալ և յոյս կայ, որ մօտիկ ապագայում կը վերջանայ։ Գիւղացիք տարակուսանքի մէջ են, որովհետև ցաւը շատերին զրկեց իրանց ընկեր-եզներից»։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ մեզ գրում են. «Մարտի 18-ին տեղիս քաղաքային թատրոնում սիրողների խումբը ծխական դպրոցի օգտին խաղաց Եմին Տէր-Գրիգորեանցի «Դամոկլեան Սուր» դրաման և «Վայրենի» վօդվիլը։ Չը նայելով եղանակի վատութեան, դարձեալ թատրոնում բաւական հասարակութիւն կար։ Խաղն անցաւ սպասածից շատ աջող և մեծ բաւականութիւն պատճառեց հասարակութեանը։ Զուտ արդիւնք մնաց 155 րուբլի. չեմ կարող չը յիշել, որ նոյն իսկ թատրոնի ռուս ծառաները, ի նկատի ունենալով ներկայացման նպատակը, հրաժարվեցին իրանց առաջարկված վարձատրութիւնից»։

Ալլերի շրջանի ՇԻԼՕՎԿԱ գիւղից մեզ գրում են. «Այստեղի հայոց ս. Գէորգ եկեղեցու մէջ ներկայ մարտի 9-ին հանդիսաւոր պատարագից յետոյ կատարվեց մաղթանք ռուսաց զօրքին յաղթութիւն հայցելու համար։ Պատարագից յետոյ գիւղիս հայ հասարակութեան շրջանում տեղի ունեցաւ հանգանակութիւն յօգուտ Կարմիր Խաչի ընկերութեան, որից գոյացած 60 րուբլի 50 կոպէկ արդիւնքը յանձնվեց տեղիս կառավարչական ներկայացուցչին վերոյիշեալ գումարը ընկերութեան հասցնելու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Ի՞նչ են կարծում եապօնացիները։ «New York Herald»-ի թղթակիցը հասել է Պինեան և ասում է, որ եապօնացիները հանգիստ կերպով և վստահութեամբ են նայում պատերազմական ապագայ գործողութիւններին։ Թղթակիցն ասում է, որ օֆիցէրներն ու զինուորները գիտեն, որ մեծ զրկանքներ և ծայրայեղ ջանքեր կան իրանց առջեւում, բայց ամենքը անյողդողդ վճռել են հասնել իրանց նուիրական նպատակին, այն է՝ Խարբին։ Թղթակցի հետ ունեցած մի խօսակցութեան մէջ եապօնական մի պաշտօնեայ կարծիք յայտնեց, որ երբ Խարբինը վերցրած կը լինի, Եապօնիան կը դիմէ Անգլիային և Ամերիկային այսպիսի յայտարարութեամբ։ Մենք վերջացրինք պատերազմը, այժմ օգնեցէք մեզ դիպլօմատիկական ներգործութեան միջոցով բաց պահել Մանջուրիան, որի բանալին, Խարբինը, մեր ձեռքին է։ (Нов)

Իսկ ինչ են ասում Եւրոպայի մասնագէտները։ «National Zeitung» լրագիրը այսպէս է հաշւում այն ծախսերը, որ կը պատճառէ ռուս-եապօնական պատերազմը, եթէ նա շարունակվի վեց ամիս։ Ցամաքային զօրքերը եապօնացիներին կը նստեն 271,371,250 ֆրանկ։ ռուսներին 690,067,500 ֆրանկ։ Ռուսական մօբիլիզացիան կարժենայ 161,071,500 ֆր., եապօնականը—34,100,000 ֆրանկ։ Նաւատորմի համար բերված են այսպիսի թւանշաններ. 1,081,167,500 ֆր. ռուսաց նաւատորմի համար և 693,172,000 ֆր.—եապօնացիների համար։ Պատերազմի տեւողութիւնը և ելքը, այս հաշւի հեղինակի կարծիքով, կախված են Սիբիրեան երկաթուղու ամրութիւնից։ Ինչ վերաբերվում է գործի ֆինանսական կողմին, Ռուսաստանը, ունենալով 17 միլիօն պետական պարտք և 6 միլիօն ֆրանկ բիւջէտ, մի կամ երկու աւելորդ միլիարդները նրա համար մեծ դեր չեն խաղում, մինչդեռ Եապօնիայի համար պետական պարտքի աւելացումը 693 միլիօն ֆրանկով, քանի որ նրա պետական բոլոր պարտքերը 1600 միլիօն են կազմում, իսկ տարեկան բիւջէտն է 600 միլիօն, մի սարսափելի բան է երեւում։ Նրա դրութիւնը այս կողմից յուսահատական է։ Իմանալու համար, թէ ինչպէս կը դիմանայ Ռուսաստանը, պէտք է հարցնել ինժեներներին։ Իմանալու համար, թէ որքան ժամանակ կը դիմանայ Եապօնիան, պէտք է հարցնել տնտեսագէտներին։ (Р. Вѣд.).

«Morning Post» լրագրին հեռագրում են Նիւ-Չուանից, որ, նայելով հաստատ տեղեկութիւններին, եապօնացիները Լեաօհէի հովտում ափ չեն իջնի ապրիլի 20-ից առաջ, որովհետև նրանց փոխադրական նաւերը դեռ զբաղված են զօրք հասցնելով Կորէա։ Ռուսների դրութիւնը օր օրի վրա աւելի ուժեղանում է, մանաւանդ աջ թեւում, որ մինչև այժմ նրանց թոյլ տեղն էր։ Նոյն իսկ Պորտ-Արտուրը այժմ շատ ուժեղացել է, քան էր պատերազմի սկզբում, և անդադար զօրքեր են տեղ հասնում։ (Нов. Вр.)։

Չինական նաւատօրմը պատրաստվում է։ Շանգհայից հաղորդում են, որ չինական հիւսիսային նաւատորմը անհրաժեշտ պատրաստութիւններ է տեսել պատերազմ ծագելու դէպքի համար։ Հրազէնքերի, ածուխի պահեստներ են կազմվել։ Նաւերը ուրիշ գոյնով են ներկված։ Ծովակալ Լիչ-Զեն-Ջժուն, որ հարաւային նաւատօրմի հրամանատարն է, իր բնակութեան տեղը տարաւ Ուսսուն։ (Р. Вѣд.)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, մարտի 8-ին

Սալմաստը որքան բարեբեր է հողով, նոյնքան և առատ է բնական հարստութիւններով—հանքերով։ Սալմաստի մի քանի մասերում մարմարի շատ հարուստ հանքեր կան, որոնք համարեա թէ չեն շահագործվում. շատ սակաւ է պատահում, որ քար կտրողները մէկ կամ երկու գերեզմանաքար կտրեն և տանեն Ռուսաստան։

Մարմարը շատ գեղեցիկ տեսք և փայլ ունի, արեւակի ազդեցութիւնը նմանցնում է մարմարի տեսքն ու փայլը, իսկ սենեակի զարդերի համար մեծ արժէք կարող է ունենալ։

Բացի մարմարից Սալմաստի սարերում, առաւելապէս Ճարայի մօտերը, կան շատ հարուստ քարածուխի հանքեր, որոնք ամենեւին չեն շահագործվում։ Սալմաստի և Խոյի սահմաններում կան հարուստ աղի հանքեր. Սալմաստին մօտիկ ծանօթ մարդիկ հաւատացնում են, որ ոսկու հանք էլ կայ, նոյն իսկ ցոյց են տալիս մի տեսակ հող, որի մէջ գտնվում են ոսկի փոշիներ (հիւլէներ)։

Դերեկ և Զնդաշտ կան հանքային տաք ջրեր, որոնց բուժիչ յատկութիւնների մասին վկայել և վկայում են շատ բժիշկներ. Փրչափուշ, Գաբաղ-Թափա և Մինաս յայտնի են թթու ջրի աղբիւրներով, աւելի գովված է տեղայիններից մօտ Գաբաղ-Թափայի ջուրը (Թամթամանեք), որի մէջ լողացողներին թիւ ու համար չը կայ։

Յիշեալ բոլոր հանքերից շահագործվում է միայն աղի հանքը, մնացածները ընկած են երեսի վրա։ Եւ մարդ զարմանում է, որ սալմաստեցիները այդ բնական հարստութիւնները թողած, աշխատում են օտար երկրներում իրանց ապրուստը հայթհայթել։

Մի՞թէ չեն կարող մի քանի հոգի ընկերանալ կամ մի ակցիոներական ընկերութիւն հիմնել և սկսել շահագործել այդ անսպառ հանքերը, որոնք վաղ-ուշ—եթէ չը շահագործվեն տեղացիներից—շահագործվելու են օտարներից։ Մի քանիսը առարկում են, թէ մեր երկիրը անապահով է այդպիսի գործերի համար, բայց մի՞թէ չէ կարելի օրինաւոր թոյլտուութեամբ բարձրագոյն իշխանութիւնից իրաւունք ստանալ և այնպէս ձեռնարկել գործին։

Յամենայն դէպս կարելի է շահագործել, միայն գործին ձեռնարկողներ չը կան, սրտովբինակով մարդիկ չը կան։ Սալմաստեցին դեռ ուշ կը հասկանայ, որ «լաւ է հայրենի փուշը, քան օտարի նուշը»։ Եւ երբ կը գայ մի ժամանակ, որ օտար կապիտալները մուտք կը գործեն Սալմաստ, տեղացիները իբրև բանուորներ կը սկսեն աշխատել օտարների գործարաններում, այն ժամանակ միայն կը հասկանան իրանց սխալը և կը դատապարտեն իրանց անհոգութիւնն ու ծուլութիւնը դէպի հայրենիքի հարստութիւնները։

Ժողովրդի մէջ խօսվում է, որ քրդերի շէյխը մեծ պատրաստութիւնների մէջ է և մտադիր է արշաւել դէպի Սալմաստ։

Սրանից մի տասն օր առաջ ամերիկահպատակ միսիօնար Լաբրը Սահաբը և իր ծառան Խոյից վերադառնում էին Սալմաստ. «Էշագ մէյդանի» կոչված տեղում անյայտ չարագործները յարձակվում են դրանց վրա, ծառային սպանում տեղն ու տեղը, իսկ Լաբրը Սահաբին բաւական հեռացնում են ճանապարհից և ձորի մէջ սոսկալի տանջանքներով սպանում: Ասում են, սպանութիւնը վրիժառութեան խնդիր է եղել: Մէջիդ-ըլ Սալթանէն խստօրէն հետևում է չարագործներին բռնելու: Այդ սպանութիւնը, ինչպէս երևում է, էժան չէ նստելու այն շըրջանին, ուր տեղի է ունեցել:

Յով. Պետրոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Քաղաքական լաւատեղեակ շրջաններում չեն թագցնում, որ Տիբէթի արշաւանքը—նախադուռն է նորանոր բարդութիւնների Արևելեան Ասիայում: Միայն պատերազմի մանրամասնութիւնները պիտի ազդեն մտքերի վրա Չինաստանում և սաստկացնեն այնտեղ յուզիչ տրամադրութիւնը: Լրագիրներին հեռագրում են, որ տիբէթցիները շրջապատված էին ինչպէս կոտորածի դատապարտված ոչխարների հօտ: Անգլիական կրակը նրանց ոչնչացնում էր անխնայ, բայց նրանք մեծ անվախութիւն ցոյց տուին և պատերազմում էին քաջութեամբ, արհամարհելով մահը: Լսվում է, որ գնդապետ Ինգլխեզբանդի և գեներալ Մակդօնալդի գործողութիւնները—ամենաանխալ միջոցն է յուզելու ամբողջ չինական ժողովուրդը և շտապեցնելու ժողովրդական ապստամբութեան պայթումը Պէկինի կառավարութեան դէմ, եթէ նա կը կամենայ կատարել իր պարտաւորութիւնները պետութիւնների առաջ և պաշտպանել օտարերկրացիների ապահովութիւնը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 մարտի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ: Յայտարարված է նաւատորմի ստորին ծառայողների զէնքի կոչումը:

«Կորէեցի» նաւապետ Բելեաևը և 19 օֆիցերները մարտի 23-ին Մարսէյլից Օդեսսա մեկնեցին Վիէննայի վրայով և Սեվաստոպոլում կը լինեն Զատկի երկրորդ կամ երրորդ օրը:

ՊԵՆԶԱ: Մեկնեց առողջապահիկ խումբը, որ կազմել է Կարմիր խաչի վարչութիւնը. խումբը կազմված է 5 բժիշկներից, 15 գթութեան քոյրերից, 30 սանիտարներից և տնտեսական մասի մի կառավարչից:

ՄՈՒՐՕՄ: Կատարվեց հոգեհանգիստ մարտի 14-ի ճակատամարտի մէջ «Սիլնիյ» ականանաւի վրա սպանված Մուրոմի քաղաքացի ինժեներ Զվերեօվի համար:

ՀՌՈՄ: «Տրիբունա» լրագրում գրված է, որ տիկին Վօլպիչելլին, իտալական հիւպատոսի կինը, իբրև իտալական Կարմիր խաչի լիազօր, յանձն առաւ «Էլբա» կրէյսէրի վրա առնված և Հօնգկօնգ տարված ռուս վիրաւորներին խնամելը:

ԲԵՐԼԻՆ: «Ֆօս. Ցայտ.»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն՝ Վիլհելմ կայսրը կայցելէ Սիցիլիայի մի քանի վայրերը և կուղևորվի Տարենտօն: Կայսրի ձայնն այժմ պարզ է և միապաղաղ: Կայսրը նորից սկսեց ծխել:

ՊԱՐԻԶ: «Matin» լրագրին Լօնդօնից հեռագրում են Ֆրանսիայի և Անգլիայի միջև տեղի ունենալիք համաձայնութեան առիթով, որ ֆրանսիական կառավարութիւնը պարտաւորվել է ապահովել Մարօկկօում առևտրի ազատութիւնը 30 տարի ժամանակով, որպէս զի բաւարարութիւն տայ անգլիական վաճառականներին, որոնք Մարօկկօի հետ յարաբերութեան մէջ են:

ԲԱՐՑԷԼՕՆԱ: (Պաշտօնական): Երբ թագաւորը դուրս էր գալիս ցուցահանդէսի շէնքից, պայթեց մի ռումբ. վիրաւորված են երկու գիւղացիներ. ձերբակալված է մի կասկածելի անձնաւորութիւն:

26 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 25-ին Թագաւոր կայսրը, Թագուհի Կայսրուհիներ Մարիա Ֆէօդորովնան և Ալէքսանդրա Ֆէօդորովնան Օգոստափառ Զաւակներով և Մեծ Իշխան Թագաժառանգը հաղորդվեցին:

ԿԱՆՆ: Ֆրանսիական Կարմիր Խաչի ընկերութիւնը կազմեց մի մեծ հանդէս ռուս վիրաւորների օգտին, որ տուեց նիւթական գերազանց արդիւնք:

ՊՕՐՏ-ՍԱԻԴ: «Վարեագի» նաւապետ Ռուդնեվը և 447 ռուս նաւաստիներ ժամանեցին այստեղ և մեկնում են Մարսէյլ:

ՍԷՈՒԼ: (Ռէյտ. գործ.) Չէմուլպօից 50 մղոն հիւսիս գտնվում է եապօնական էսկադրան 40 փոխադրող նաւերից բաղկացած. ենթադրում են, որ այդ էսկադրայով փոխադրում են երկրորդ բանակի մի մասը:

ՏՕԿԻՕ: (Ռէյտ. գործ.): Եապօնական փոխադրող նաւերը ժամանում են Եալու գետի բերանը: Զօրքերի ափ իջեցնելը կատարվում է զանազան կէտերում գետի կորէական ափի վրա, եապօնական նաւակների պաշտպանութեան տակ:

ԲԵՐԼԻՆ: Բրիւսէլից ստացված տեղեկութիւնների համաձայն, ռուս կառավարութիւնը պատուիրել է բէլգիական պողպատի ձուլարաններում բազմաթիւ վագօններ, սիբիրական երկաթուղով զօրք տեղափոխելու համար. 250 վագօն պէտք է յանձնվեն յուլիսի 2-ին:

Ինչպէս հաղորդում են Չիֆուից, գործերի ընդհանուր դրութեանը նայելով՝ պէտք է սպասել մօտաւորապէս երկու շաբաթվայ ընթացքում Եալու գետի ափերին ճակատամարտի, ինչպէս և եապօնացիների յարձակման Նիւչժուանի վրա:

Լօնդօնից եկած տեղեկութիւնների համաձայն, Եալուի ճանապարհի վրա են գտնվում 5000 ռուս զօրքեր՝ եղածն ուժեղացնելու համար:

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ: Ուղևորվեց Հեռաւոր Արևելք սանիտարական խումբը, որ կազմակերպել է քաղաքը, և նոյնպիսի մի խումբ, որ կազմել է Կարմիր խաչի տեղական բաժինը:

ԲԵՐԼԻՆ: Ինչպէս հաղորդում են Չիֆուից, ռուսները ձերբակալեցին Նիւչժուանում երկու եապօնական լրտեսներին, որոնց մօտ գտնվեցին նոր ամրութիւնների յատակագծերը: Սառուցը Եալուի վրա սկսում է անցնել: Ճանապարհների դրութիւնը խանգարում է պատերազմական գործողութիւններին, թէպէտ և չէ արգելք լինում եապօնացիների արշաւանքին:

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ: Ժամանեց գերմանական թագաժառանգ պրինցը և կայարանում դիմաւորվեց թագաւորի, թագաժառանգ պրինցի և ուրիշ պրինցների կողմից: Կայարանից նա գնաց Ամալիէնբօրգ ամրոցը և այցելեց անգլիական թագուհին, որը իսկոյն և եթ փոխադարձ այցելութիւն տուեց:

ՎԻԷՆՆԱ: Իտալական դեսպան դուքս Ավարնա կը ժամանէ Աբբացիա, որպէս զի ներկայ լինի Գօլուխօվսկու տեսակցութեանը արտաքին գործերի մինիստր Տիտտօնիի հետ:

ՍՕՖԻԱ: (Յատուկ): Իշխանը վերադարձաւ Սօֆիա: Կիսապաշտօնական «Новый Вѣкъ» լրագրում տպված է յօդուած այն հետևանքների մասին, որոնք բղխում են յոյների երկպառակութիւններից Մակեդօնիայում, այնպէս որ յոյների թշնամութիւնը հասաւ այնտեղ, որ նրանք փորձ արեցին բուլղարական միտրօպօլիտի կեանքի դէմ Ստրումիցայում: Լրագիրը ընդգծում է, որ մինչև անգամ թիւրքերը շահ չունեն այդ կռւից. նրանք, ընդհակառակն, պարտաւոր են խիստ միջոցներ ձեռք առնել այդ վէճերին վերջ տալու համար:

26 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 25-ին պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացված Հեռաւոր Արևելքից:

Բարձրագոյն բարեհաճութեամբ Կայսերական կառավարութեան և Ֆրանսիական հանրապետութեան միջև կայացած համաձայնութեան համեմատ, ռուսահպատակների շահերի պաշտպանութիւնը և Կայսերական միսիայի և հիւպատոսութիւնների շինութիւնների պահպանութիւնը Կորէայում, ռուսական գործակալների հեռանալու պատճառով, ժամանակաւորապէս յանձնված է Ֆրանսիայի դիպլօմատիական հիւպատոսական ներկայացուցիչներին:

ՊԱՐԻԶ: Մարտի 23-ին կատարվեց մի ահագին ցոյց այն շոգենաւի գալու առիթով, որի վրա գտնվում էին «Կորէէց» մարտանաւի հրամանատար Բէլեաեվ և 19 օֆիցերներ «Վարեագ» կրէյսէրից: Մեծ Դքսուհի Անաստասիա Միխայլօվնան դիտմամբ ժամանեց Կաննից՝ ողջունելու համար Չէմուլպօի հերոսներին: Նաւահանգստից Մեծ Դքսուհին, 20 օֆիցերների ուղեկցութեամբ կառքերով գնաց կայարան, ողջունվելով բազմաթիւ ամբոխից, և հինգ ժամեայ գնացքով ուղևորվեց Կանն, ուր օֆիցերներին առաջարկվեց ճաշ: Երեկոյեան Չէմուլպօի հերոսները Գէնուայի և Վիէննայի վրայով ճանապարհ ընկան Սեվաստոպօլ: Շատ յուզիչ էր Մեծ Իշխանուհու ցոյց տուած ընդունելութիւնը օֆիցերներին:

ՎԻԷՆՆԱ: Մարտի 25-ին Մարսէլից ժամանեցին 25 ռուս ծովային օֆիցերներ, որոնք վերադառնում էին Չէմուլպօից: Երեկոյեան նրանք ճանապարհ ընկան Օդէսսա:

ԲԷԼԳՐԱԴ: Զուրկ է որ և է հիմքից մի ռուս լրագրի հաղորդած այն տեղեկութիւնը, թէ բազմաթիւ բարձրաստիճան օֆիցերների արձակման պատճառով, զօրքի և ազգաբնակութեան մէջ դժգոհութիւն է տիրում. արձակված են միայն երեք բարձրաստիճան օֆիցերներ, նշանակելով նրանց թոշակներ, որպէս զի ասպարէզ տրվի ուրիշ ընդունակ օֆիցերներին. այդ հարցում կառավարութիւնը որ և է ուրիշ նպատակներով չէր ղեկավարվում, բացի գործի շահից: Ճիշդ չէ նոյնպէս, որ իբր թէ թագաւորի երկու նոր ադիւտանտներ մասնակցել են դաւադրութեան մէջ: Նոր նշանակված ադիւտանտներից ոչ մէկը ոչ անմիջապէս, ոչ էլ կողմնակի կերպով մասնակից չէ եղել յեղափոխութեանը:

ԿԷՕԼՆ: Հռոմից հաղորդած տեղեկութեան համեմատ, ղեկավարող շրջաններում ամենևին չեն մտածում Բերլինում պապական դեսպանութիւն հիմնելու մասին:

ՊԱԼԷՐՄՕ: «Հօհէնցօլէրն» զբօսանաւի վրա տրվեց թէյ, որին գերմանական կայսրը հրաւիրեց այստեղի հասարակութեան ներկայացուցիչներին և ներկայացուցչուհիներին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Փ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Սօլօդօվ ատամնաբոյժ. 9—11 ժ.

ԵՐԵԿՕՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—7—$7^1/_2$ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Փ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—$7^1/_2$—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ:

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.
ԳՋԵԼԻԵՎ

Բժշկ. Բ. Նաւասարդեան
Թիֆլիսից փոխադրվեց ՌՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է $11^1/_2$—$1^1/_2$ ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան:
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ո. կ. ե. հ.) 6—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը 9—11 ժ. առաւօտը
և 5—7 ժ. երեկոյեան:
Վելիամինօվսկայա փողոց, տ. Սաֆարօվի, № 13. (չ. ու. կ.) 29—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի: 42—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւնների. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տէլէֆօն 825.
(շ. ե. հ. չ.) 14—105

ՎՐՋԻՆ
ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ
երկու հատոր
Գինն է 1 ր. 50 կ.
Դիմել Թիֆլիս. Ա. Քալանթարին, կամ «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցին:

Լոյս տեսաւ
ՊՐՕՖ. Ռ. Ա. ՌՕԼԷՍԻ
ՀՐԱՇԱԼԻ ԴԱՐ
Տասնիններորդ դարի դրական և բացասական կողմերը, թարգմ. և հեղինակի (դարվինականութեան առաջին հիմնադիրներից մէկի) կենսագրութիւնը գրեց Ստ. Լիսիցեան
Գինն է (260 մեծադ. երես)—80 կ.
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում և թարգմանչի մօտ՝ Թիֆլիս, (Բեհբութեան փողոց, 29):
Նոյն թարգմանչի՝ Բրետ-Հարտ. «Իննըսուն և ութը տարի առաջ», գինն է 25 կոպ.
2—3

Լոյս տեսաւ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
երրորդ գիրքը
ՃԱՊՕՆԻԱ
կամ Ծագող արեգակի երկիրը
հեղ. Շրէյդէրի.
Պատկերով և քարտէզով. գինն է 25 կոպէկ:
Դիմել գրավաճառներին, իսկ մեծ քանակութեան համար հրատարակչին:

ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆ
Ս. ՍՈՂՕՄՕՆԵԱՆԻ
Ընդունում է լուսատիպ գեղարուեստական գործերի պատուէրներ:
1) Մեծադիր, գրքերի ու ալբօմների համար և բաց-նամակներով:
2) Յաջողութեամբ պատրաստում է ՑԻՆԿԻ ԿԼԻՇԷՆԵՐ մատչելի գներով և ըստ պահանջի արագ:
3) Վաճառվում են բաց նամակներ գործիչների, աւերակների և տեսարանների նկարներով. 1-ը 5 կոպ., 10-ը—40 կ., 100—3 ր. և աւելին զիջումով:
Դիմել՝ Фото-цинкографія С. Согомоняна Тифлисъ, Базарная 22. կ. ե. ո. 2—5

Ծախվում է՝ սակաւաթիւ
Լ.—ՄԱՆ.
ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ
Գինն է 15 կ.
Դիմել «Գուտտէնբէրգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցներին: շ. կ. ե. հ. շ. 1—5

Լոյս տեսաւ երդուեալ հաւատարմատար
Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
«ПРАКТИЧЕСКОЕ РУКОВОДСТВО
для составленія бумагъ по дѣламъ Гражданданскаго Судопроизводства въ Закавказскомъ Краѣ».
Գինն է 1 րուբլի:
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրօնական, Խիտլէկէլի և Գուտտէնբէրգ գրավաճառանոցներում: Հեղինակին դիմողները՝ (прис. повѣр. С. С. Меликъ-Адамову. Тифлисъ, Межевая ул., д. № 40), 10 օրինակից աւելի պահանջով ստանում են 10% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում: (ե. հ. շ.) 5—10

ՎԻՊԱԹԵՐԹ
ՀԱՆԴԷՍ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ
1. «Մերժուած սէր», պօլսական կեանքի դրուագներ, ազգային վէպ, գրած է պ. Ե. Սրմաքէշխանլեան:
2. «Տառմեր և գաղտնիք հաւատարմութեան», հեղինակութիւն պ. Գ. Մառիօյի և Լօնէյի: (Այս վէպը բնաւ կապ և նմանութիւն չունի տարիներ առաջ հրատարակուած Գաղտնիք Հաւատարմութեան հետ):
3. «Խորհրդաւոր դատ», Ֆոռթիւնէ տիւ Պօակօպէի:

Բաժանորդագրութեան պայմաններն են՝

Պուլկարիոյ	համար	տարեկան	5 ֆրանք
Արտասահմանի	»	»	6 »
Ամերիկայի	»	»	1 տոլ. 20 սէնդ
Ռուսիոյ	»	»	2 րուբ. 30 կ.

Հրատարակիչ՝ Օննիկ Բարսեղեան
Հասցէ՝ REVUE VIBATERT, Imprimerie Orientale VARNA (Bulgarie).

Լոյս տեսաւ № 9.

ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՅ

Դանկօի սիրտը

Թարգմ. Արշակ Աթայեան

Գինն է 3 կոպ.

Գումարով գնողներին 30% զեղչ.: Ճանապարհածախսը իրանց վրա: Դիմել՝ Въ Тифлисъ (Пушкинскій пассажъ). Гев. Бабурянцу.
2—2

Զգուշացէ՛ք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՈՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէնները, սևութիւնը, դեղին բծերը, պզուկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապոն, բարձր արժանաւորութեան:

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թւի համար:

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.:

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում: Դէպօ, Թիֆլիսում, Ազմուրօվի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուբինօվի և Գրիֆակի, պ.պ. Պօպօֆների և Արխտակովի մօտ: (1, 15) 4—24

ԲԻԺՕ ԳԻՆԻ

(Vin de Bugeaud)

VIN
TONI-NUTRITIF
DE
BUGEAUD
P. LEBEAULT & Cie
PARIS

Տօնիքական և սննդարար—քինքինայի և կակաօի գինի:

Ֆրանսիական տօնիքական գինին առողջացնում է երեխաներին, կանանց, ծերերին և բոլոր թուլացածներին:

Գտնվում է Ռուսաստանի դեղատներում:

Ծախվում է մեծ քանակութեամբ P. Zebeault et C—ie 5, rue Bourg-l'Abbé, Paris.

(2.) 7—12

Բ Ժ Ի Շ Կ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6: Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, Բախչիեվի դեղատան կից:

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ

(Capsules au Matico)

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Թոյլ է տրված Ռուսաստանում:

Աչքառութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում կապայ-բալզամը հեղուկ ձևով:

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:

(12 և 19) 2—20

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Աշակերտաց համար

1. Դասատետր կրօնի ա. տարի . — 25
2. » » բ. » . — 20
3. » » գ. » . — 30
4. Հին-ուխտ դ. » . — 35
5. Նոր-ուխտ ե. » . — 40
6. Գործք առաքելոց գ. » . — 40

Ուսուցչաց համար

7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)— —
8. » » —նոր-ուխտի . 2—50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ. 1—50
10. » » » Ե. » — 50

Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ:

Կարելի է դիմել—1) ինձ (коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».

66—100 Սահակ քահ. Սահակեանց

ՉԸ ԿԱՅ

ոչ մի մարդ, որը չը խոստովանէր իմ յանձնարարած նորագոյն մետաղէ «Իմպերիալ» ստերէօսկօպի յարմարեցված խրատութիւն սովորեցնելու համար, որը ցոյց է տալիս բոլորովին բնական ձևով, ամեն տեսակ տեսարաններ, ձևեր ու խմբեր պլաստիկ բովանդակութեամբ: Ստերէօսկոպի և 50 զանազանակեր լուսանկարչական պատկերների գինը միասին արժէ 1 ր. 75 կ., ճանապարհածախս 25 կ., Աս. Ռուսաստանի համար (II և III շրջան) կոպ.: Ուղարկվում է վերադիր վճարով:

Ունենք 42 սէրիա պատկերներ, ամեն մէկի մէջ 25 հատ: Մի սէրիան արժէ 50 կ.:

Դիմել Ш. Кульварскому Варшава, Холодная, 18, с. д.

Գրագրութիւնը միայն ռուսերէն

9, 19, 29 3—8

Մի երիտասարդ, որ լաւ ծանօթ է գրագրութիւնների, թէ հայերէնի և թէ ռուսերէնի հետ, վարել է հոգևոր կառավարութեան քարտուղարի պաշտօնը, իր համապատասխան տեղ է որոնում, ձեռնտու պայմաններով. ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատանը: 2—5

ԾԱԽՎՈՒՄ Է ԷԺԱՆ ԼԱՒ ՏԵՂ

Պեսկօվսկի փողոցից քիչ վեր, ս. Կարապետսկի պօղեօսի վրա, դատարկ տեղ, լաւ դիրքով, որտեղից բացվում է ընդարձակ տեսարան, փողոցում կոյուղի. 37—40 քառ. սաժէն: Դիմել, Հալաբար, Լազարևսկի փողոց, Մուրադովի տուն, № 49. Յ. Ե.-ին: 2—10

Լոյս տեսաւ

ՄԻՔ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ

⁂ Բանաստեղծութիւններ 15 կ.

Հասցէն. Тифлисъ, К-ра нотаріуса Мгеброва.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

„ՍՏՈՒԿԷՆ ԵՒ ԸՆԿ."

ԲԱԳՈՒ

Իր սեփական պահեստներում մշտապէս ունի

Երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկկողանի երկաթէ գերաններ, ջրհան մեքենաներ «Կամերոն» և «Դուպլէքս», ռուսական գազային խողովակներ և դրանց զօդաւորող մասեր, ֆիտինգներ և այլն: Դազգեր զանազան տեսակի (станки токарные, сверлильные, строгальные и др.): Մամուլներ ծակող և ուրիշ տեսակներ: Պողպատ՝ գուրեր, կտրոցներ և գործիքներ շինելու համար: Մետաղեայ փակեր, աղյուս անհալ (согнеупорный), «Գլէնբոյգ» և կաւ, բևեռներ (заклепки котельныя, пистонныя): Գամեր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաներ, պղինձ թերթաւոր և կտորներով, պղինձ խողովակներ, թուջէ ասֆալտած (асфалтированныя) խողովակներ ջրուղիների համար և դրանց զօդաւորող մասեր: Անագ ձողաւոր, արճիճ թերթաւոր և կտորներով, ցինկ թերթաւոր և այլն: Պարագաներ (арматура) [illegible] բրօնզեայ և ձուլածոյ: Գործիքներ զանազան տեսակի, բետոնէ տարկաններ, ցեմենտ. նմանապէս տեխնիկական ամեն տեսակի մետաղներ և իւղեր:

Ներկայացուցիչ է

ՌՈՒՍՏՕՆ ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.

Շոգեմեքենաներ
Կերօսինեայ } շարժիչ մեքենաներ
Նաւթեայ
Շոգետարներ (локомобилы)
Արգուլներ (катки для шоссе)

ՌԻՔԱՐԴ ՄԱՅԵՐ

Ներկեր զանազան տեսակի
Արճիճեայ ճերմկուց (бѣлила)
Արճիճեայ սուսր (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ
ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ

Միակ ներկայացուցիչը

Խողովակներ առանց կարի, գազեայ, նաւթահորերի ծխնելուզի և ջրաբաշխական: Նմանապէս և ամրակուռ խողովակներ խտացուցիչների համար (компрессоръ):

Կայմեր (мачты) անկար խողովակներից, էլեկտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար սիւներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար:

Ներկայացուցիչ է նմանապէս «Ֆանկէ» «Էմիլ Լիւգարտ և ընկ.» և ուրիշ ընկերութիւնների ու հաստատութիւնների:

Ընդունում է լիովին կառուցումն տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիկական պիտոյքների վերաբերեալ:

Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս:

Արժէքների ցուցակները ուղարկվում են ձրիաբար:

(կ. 1 ամ.)

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

№ 1. Թարախման գիշերը, պատմ. զրոյց Լէօի, 2-րդ տպ. (սպառված) գ. . . 5 կ.
№ 2. 26 տղամարդ եւ 1 աղջիկ, վէպիկ Մ. Գօրկու, թ. Մուշէ վ. . . 5 »
№ 3. Խենթը և ուրիշ պատմուածքներ, Վ. Փափազեանի (սպառված) . . 10 »
№ 4. Կեանքի դասը, պատմուածք Ա. Ահարոնեանի, (սպառված) . . 5 »
№ 5. Սպիտակ ծաղիկ, Նովելլա Է. Օժէշկօի, թ. Ս. Շահվերդեանի . . 5 »
№ 6. Արտիստը, վէպիկ Շիրվանզադէի . . 15 »
№ 7. Եղօի նոր բախտը, պատմուածք Շահրիարի . . 3 »
№ 8. Եապօնիա (համառօտ տեսութիւն), Խ. Խաչատրեանի . . 3 »
№ 9. Դանկօի սիրտը, Մ. Գօրկու, թ. Ա. Աթայեանի . . 3 »

Շուտով լոյս կը տեսնեն

№ 10. Իմ ուղեցոյցը, Մաքսիմ Գօրկու, թ. ա. Աթայեանի . . 10 »
№ 11. Երկու պատմուածք, Ա. Ահարոնեանի . . 3 »

Գումարով գնողներին 30% զեղչ. ուղարկում ենք նաև վերադիր վճարով: Ճանապարհածախսը գնողների վրա: Դիմել՝ Тифлисъ (Пушкинскій пассажъ), Гев. Бабурянцу. 1—1



40% խնայողութիւն է ունենում ամեն մարդ: Պահանջեցէք և համոզվեցէք: Ընտրովի հաւաքածուներ 12 արժէքաւոր իրերից միայն 5 ր. 25 կ.-ի:



Կանանց իրեր. գրպանի հիանալի ժամացոյց սև ագռաւագոյն պողպատից՝ առանց բանալու լարվող-ռեմօնտուար, ժամացոյցի հետ վզի շղթայ նոր ոսկուց, հիանալի բրօշկա 84 պրոբի արծաթից նորագոյն պարիզեան ձևով, նոյն տեսակի գեղեցիկ մատանի, 6 հատ 84 պրոբի արծաթէ բրելօկներ պարիզեան գործ, արծաթաջրած կամ նոր ոսկուց ապարանջան էլեգանտ ձևով շինված, կաշւէ դրամաքսակ 5 բաժանմունքով, մեքենայական կողպէք, որը պարունակում է իր մէջ կաւուչուկէ մի կնիք անուան, հայրանուան և ազգանուան:

Նոյն 12 իրերն անձայն ժամացոյցով 6 ր. 50 կ.
» » » արծաթէ ժամացոյցով 8 » 50 »
» » » 56 պրոբանի ոսկէ կանացի անձայն ժամացուցով 20 » — »

Տղամարդկանց իրեր. 12 արժէքաւոր իրեր միայն 5 ր. 50 կ.: Գրպանի հիանալի ժամացոյց սև ագռաւագոյն պողպատից, պինդ կազմով, ռեմօնտուարով՝ 36 ժամում մի անգամ լարվող, նուրբ շղթայ բրելօկով՝ Հաւատ, Յոյս և սէր, կողմնացոյց կամ բինօկլ պիքանտ տեսարաններով, մի զոյգ օսլայած շապկի թևի կոճակներ (զապօնկա) նորագոյն և նուրբ կրկնակի բանուածքով, նոյն տեսակի քորոց ամենանուրբ ճաշակով, 6 հատ 84 պրոբանի արծաթէ բրելօկներ ամեն ձևի, կաշւէ դրամապանակ 5 բաժանմունքով, մեքենայական կողպէք, որ իր մէջ պարունակում է պատուէր տուողի անուան, հայրանուան և ազգանուան համար մի կնիք:

Նոյն խումբ իրերն անձայն ժամացոյցով . . . 6 ր. 50 կ.:
» » » » » ամերիկական նոր ոսկուց 6 » 50 »
» » 84 պրոբի արծաթէ անձայն ժամացոյցով . . 8 » 50 »
» » 56 » ոսկէ ժամացոյցով . . . 40 » — »

Նոյնպէս խումբ առարկաներ աւելացրած մի հատ «Սիմֆօնիա» մուզիկայի հայելիաւոր արկղ, որը նուագում է լաւագոյն կոմպօզիտորների գրուածքներից հնչուն ձայնով՝ 2 ր. 50 կ. աւելի արժէքով:

Ժամացոյցներն ուղարկվում են լաւ փորձելուց յետոյ, 6 տարվայ երաշխաւորութեամբ: Պատուէրներն ուղարկվում են անմիջապէս վերադիր վճարով և առանց գրաւականի:

Դիմել. Складъ часовъ золотыхъ и бриллiантовыхъ издѣлiй Ш. Биткеру, Варшава, Маршалковская улица № 13а. կ. 5—8

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ընկերութեան **ԳՐԱՄՄՕՖՕՆ** Ռուսաստանում

Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպէկտ, Արխեանցի տուն № 7.

Հասցէն հեռագրով Թիֆլիս

ԳՐԱՄՄՕԿՕՄՊԱՆԻԱ.

Հեռախօս № 69.



ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենակատարելագործված սալոնական և կօնցերտային գրամմօֆօններ:

Մեծ քանակութեամբ՝ անշչուկ պլաստինկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս են.—ռուսաց, վրաց, հայոց, թուրքական, պարսկական, տաճկական, լեհական, ֆրանսիական, անգլիական, իտալական, գերմանական և ուրիշները:

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՍ խնդրում ենք ուշադրութիւն դարձնէք մեր ֆաբրիկայի դրօշմին «ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ» առանց մեր դրօշմի ընդունել՝ ինչպէս կեղծված:

Պահեստում կայ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի է նորոգել փչացած ապարատները: Գրամաֆօնի ուղիղ բանելու համար տրվում է երաշխաւորական թերթ 3 տարի ժամանակով:

Ուղարկելիք ապրանքների արկղը և այլ ծախսը գնողների հաշւին:

ՈՒՂԱՐԿԵԼԸ ապարատների երկաթուղու բոլոր կայարանները, եւրօպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կատարվում է պահեստի հաշւին:

Փոստով ուղարկած ապրանքների ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշւին կէսը:

Ածած պլատինկաները միայն մեր բաց թողած դրօշմով «Գրող-Հրեշտակ» յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով.

Փոքր սովորական » էկստրայ	հատը — 50 կոպ.	Մեծ սովորական » էկստրայ	հատը 1 ռ. 00 կոպ.
Գիգանտ սովորական » էկստրայ	հատը 1 ռ. 30 կոպ.	Տամանիօ	» 1 » — »

Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8½ առաւ. մինչև ժամի 9-ը երեկոյեան:

Պահանջեցէք պատկերազարդ պրէյսկուրանտներ:

Գումարով գնողներին ուղարկվում է Օպէօվի պրէյսկուրանտները պահանջելուն պէս:—Պահանջեցէք լիակատար լիբրետտօ գրամմօֆօնի համար, գինը 1 ր. 50 կ.: 24—50

Дозволено Цензурою. Тифлисъ, 26-го марта 1904 г.
Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.